

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ապրիլ 24-ի Նախօրեակին

Մի քանի օրէն Հայութիւնը եւ քաղաքակիրթ աշխարհը կը նշեն 108-րդ տարեւոյցը՝ Հայոց Յեղասպանութեան, որուն զոհ գացին Օսմանեան կայսրութեան տարածքին ապրող երկու միլիոն հայեր, որոնք տարհանուելով իրենց բնօրրանէն ու քշուելով Սուրիոյ կիզիչ անապատները, ճանապարհին ենթարկուեցան անմարդկային սարսափազդու վայրագութիւններու՝ դառնալով 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան վկաները:

Այդ թուականէն ասդին Հայ ժողովուրդը կը սգայ իր զոհերը ու կը շարունակէ պահանջել թուրքիոյ նախկին ու ներկայ իշխանութիւններէն առերեսուելու իրենց պատմութեան սեւ էջերուն հետ, ընդունելու Յեղասպանութեան իրողութիւնը եւ հատուցում տալու զոհերու իրաւայաջորդներուն:

Մինչ թուրքիա կը շարունակէր ժխտել պետական մակարդակով ծրագրուած ու ի գործ դրուած իր հայաջինջ քաղաքականութեան փաստը, Հայ ժողովուրդը յաջողեցաւ ապահովել մեծ պետութիւններուն եւ կազմակերպութիւններուն կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Թրքական իրարայաջորդ կառավարութիւններու բոլոր ջանքերն ու սպառնալիքները մատնուեցան ձայնողութեան ու վերջին տարիներուն Միացեալ Նահանգներն ու Եւրոպական երկիրները՝ մէկը միւսին ետեւէն ճանջցան Հայոց Յեղասպանութիւնը:

Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը ընդունեցին նաեւ շարք մը թուրք մտաւորականներ, որոնք օգտագործելով Երտողանի կառավարութեան ապահոված որոշ ազատութիւնները, սկսան միանալ Հայութեան ու նշել Ապրիլ 24-ի տարեւոյցը՝ Պոլսոյ իրապարակներուն վրայ պարզելով զոհ դարձած Հայ մտաւորականներու նկարները: Վերջին մի քանի տարիներուն սակայն, «թրքական գարունը» վերջ գտաւ, երկիրը վերադարձաւ իր նախկին բռնատիրական սովորութիւններուն ու թուրք մտաւորականներէն շատեր դարձան անելի զգուշաւոր:

Թուրք պետութիւնը ոչ միայն կը ժխտէ Յեղասպանութեան իրողութիւնը, այլ եւ իր փոքր եղբոր՝ Ատրպէյճանի հետ ձեռք ձեռքի տուած նոր ցեղասպանութեան համար հող կը պատրաստէ: Արցախը Հայաստանի կապող՝ Լաչինի միջանցքի փակումը մէկ օղակն է այդ հայաջինջ քաղաքականութեան: Այդ երկու երկիրներուն մօտաւոր նպատակն է ստեղծել այնպիսի պայմաններ, որ Արցախա-

## Ատրպէյճանի Հետ Ռազմական Հաւասարակշռութիւնը Վերականգնելու Լուրջ Ծրագիրներ Ունինք. Փաշինեան

Ապրիլ 18-ին, Ազգային Ժողովի նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայացուց Կառավարութեան 2021-2026թթ. ծրագրի 2022թ. կատարման ընթացքն ու արդիւնքները:

«Բանակի փոփոխութիւնն էլ առաջին հերթին մարդու մտքի փոփոխութիւնից է պէտք սկսել. բացի ֆիզիքական փոփոխութիւնից, շատ կարեւոր է բովանդակային փոփոխութիւնը», պատասխանելով ՔՊ խմբակցութեան պատգամաւոր Վիգէն Խաչատրեանի հարցին, թէ ինչ փոփոխութիւններ կը կատարուին բանակին մէջ, ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը կարեւորեց գինուորի, սպայի բարոյական սկզբունքները, արհեստավարժութիւնը եւ ընկերային երաշխիքը: Նիկոլ Փաշինեան ընդգծեց, որ չէ եղած որեւէ հարց, որ չէ լուծուած դրամ չըլլալու պատճառով. «փողը խնդրի լուծման ամենահեշտ հարցն է»:

«Այսօր էլ են մեզ ասում, թէ խաղաղութիւնը պարտադրուած են: Է՛հ հա, 94 թուին պատերազմում յաղթեցինք, բա ինչու չպարտադրեցինք: Իմ կարծիքով՝ խաղաղու-



Վարչապետ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Ազգային ժողովէն ներս

թիւնը կառուցում են, ստեղծում են», նշեց Նիկոլ Փաշինեան եւ յաւելեց, որ Ատրպէյճանի հետ ռազմական հաւասարակշռութեան ճեղքումը վերականգնելու լուրջ ծրագիրներ կան, որ, սակայն, հրապարակային պէտք է քննարկել:

Փաշինեան պատրաստակամութիւն յայտնեց որոշ հարցեր նաեւ խորհրդարանական ընդդիմութեան հետ քննարկելու:

Խորհրդարանի առջեւ Փաշինեան յայտարարեց որ, Հայաստանի կառավարութիւնը պիտի ընէ հնարաւորը Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիրը շուտ կնքելու համար, բայց այդ հնարաւոր պիտի ըլլայ, միայն եթէ երկու երկիրները ճանչնան միմեանց տարած քայլին ամբողջականութիւնը,

## Շքեղ ճաշկերոյթի Մը Ընթացքին ՀԲԸՄ Պատուեց Նոպէլեան Մրցանակակիր՝ Արտեմ Փաթափութեանը



Վաչէ Մանուկեան (ձախից), Արտեմ Փաթափութեան եւ Պերճ Սեդրակեան Յուշանուէրի յանձնման պահուն (photo by Arka Photography)

Շաբաթ, Ապրիլ 15-ին, Պէյլըրլի Հիլզի «Ուիլլըր» հիւրանոցէն ներս տեղի ունեցած շքեղ ճաշկերոյթի մը ընթացքին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ) պատուեց Նոպէլեան Մրցանակի արժանացած առաջին հայ գիտնական՝ Արտեմ Փաթափութեանը:

Աւելի քան 700 հոգիներու ներկայութեան, որոնց շարքին Ամերիկեան քաղաքական անձնաւորութիւններ, հայկական կազմակերպութիւններու եւ մամուլի ներկա-

յացուցիչներ, ՀԲԸՄ-ի բարերարներ եւ համակիրներ, տեղի ունեցած երեկոն սկսաւ ՀԲԸՄ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի երգչախումբին կողմէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Հայաստանի եւ ՀԲԸՄ-ի քայլերգներու կատարմամբ: Ապա, բացման խօսքերով հանդէս եկան օրուայ հանդիսավարներ՝ Թամար Մինանեան-Նասաման եւ Թաւաբեան Արա Պալիքեան: Արեւմտեան Ամերիկայի Թե-

## Լեմքինի Հիմնարկը Քննադատած Է Միջազգային Հանրութիւնը, Որ Բաւարար Ձանքեր Չէ Գործադրած՝ Ստիպելու Պաքուին Բանալ Լաչինը

Յեղասպանութեան կանխարգիւման Լեմքինի հիմնարկը իր վրդովմունքը յայտնած է Լաչինի միջանցքի բացման հարցով Արդարադատութեան Միջազգային Դատարանի ժամանակաւոր միջոցներու վերաբերեալ պարտաւորեցնող որոշումը Պաքուի կողմէ չիրականացնելու առնչութեամբ:

«Լեմքինի հիմնարկը նաեւ մտահոգուած է, որ միջազգային հանրութիւնը չի կրնար աջակցութիւն ցուցաբերել կենսունակ մեխանիզմներով ՄԲԴ-ի որոշումները պարտադրելու հարցով», յայտարարած է կազմակերպութիւնը՝ փաստելով, որ միջազգային հանրութիւնը բաւարար ջանքեր չէ գործադրած ստիպելու Պաքուին վերացնել ճանապարհի շրջափակումը:

Կառուցելու մասնաւորապէս Եւրոմիութիւնը քննադատած է, այդ շարքին՝ դիտորդական առաքելութիւնը, Հարաւային Կովկասի մէջ ԵՄ բանազնաց թոյլօ Քլարը, պնդելով որ վերջինս «կը շարունակէ իր ամօթալի ջանքերը՝ երկու կողմերուն ուղղուած կոչերով»:



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Տարածաշրջանում Իրավիճակը Կայուն Չէր Դեռևս Մինչ «Այլ Խաղացողների Ներգրավումը». Զախարովայի Պնդման Զեռքերով

ԼՈՒՍԻՆԷ ՈՍԿԱՆԵԱՆ

Ապրիլի 12-ին հերթական մամուլի ասուլիսի ժամանակ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայն անդրադարձել է Տեղ գիւղում արձանագրուած լարուածութեանը՝ նշելով, որ այլ խաղացողների ներգրավումը լրացուցիչ ապակայունացում է ստեղծում հայ-ատրպէյճանական հակամարտութիւնում:

Մասնաւորապէս, լրագրողի հարցին, թէ հնարաւոր է ասել, որ ընթացիկ լարուածութեան պատճառը արեւմտեան երկրների կառուցողական է շարաւային կովկասում, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչն ասել է, որ իրենք այդ մասին նախկինում էլ են խօսել եւ կիսուել ոչ թէ ենթադրութիւններով, այլ վերլուծութեամբ. «Մենք կիսուել ենք մեր վերլուծութեամբ, որ այլ խաղացողների կամ այլ կառուցողների ներգրավումը, որոնք երբեք չեն զբաղուել այս հնացած հակամարտութեան կարգաւորմամբ, չի ունենայ այդ յաւելեալ արժէքը եւ ընդհանրապէս չի ունենայ խաղաղութեան հասնելու ազդեցութիւն, այլ, ցաւօք, կամ կ'օգտագործուի, կամ կը յանգեցնի սրումներին եւ ապակայունացմանը, կը հեռացնի նախանշուած խաղաղ կարգաւորման ձեռքբերումից»:

Զախարովայն յաւելել է, որ

տարբեր արտայայտումներ կան այն բանի, թէ ինչպէս է արտաքին խաղացողների միջամտութեան պատճառով, որոնք երբեք հնարաւորութիւն չեն ունեցել դրսեւորելու իրենց կառուցողական տեսանկիւնից, լրացուցիչ ապակայունացում ստեղծուած:

Զախարովայն չի նշել, թէ արեւմտեան կոնկրետ որ երկրների կամ կառուցողների մասին է խօսքը: Սակայն հաշուի առնելով, որ 2020 թ. պատերազմից յետոյ արեւմտեան ամենակտիւ ներգրավուածութիւնը հակամարտութիւնում բանակցութիւնների տեսանկիւնից Փաշինեան-Ալիեւ-Միշել ձեւաչափն է, իսկ տեղում նաեւ՝ ԵՄ քաղաքացիական դիտորդների ներգրավուածութիւնը, «Փաստերի ստուգման հարթակը» ներկայացնում է դրանց ներգրավումից առաջ եւ յետոյ տեղ գտած միջադէպերը Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններում:

2021 թուական

2021 թ.-ին ատրպէյճանական զինուժը երկու անգամ ներխուժեց Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածք:

Ատրպէյճանական բանակը նախ Մայիսի 12-ին առաջ եկաւ Սիւնիքի մարզի Սեւ լճի հատուածում՝ խախտելով Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը:

Մայիսի 13-ին դատախազու-

թիւնը յայտնեց, որ ատրպէյճանցիները մօտ 3-3.5 քմ խորացել են ՀՀ տարածքում եւ դիրքաւորուել են բարենպաստ բարձունքներից մէկի վրայ:

Նոյն օրը վարչապետի այդ օրերին պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանն Անվտանգութեան խորհրդի արտահերթ նիստի ընթացքում տեղեկացրեց, որ ատրպէյճանական զինուժի շուրջ 250 ներկայացուցիչներ շարունակում են գտնուել պետական սահմաններից ներս՝ Սիւնիքի եւ Գեղարքունիքի մարզերի որոշ հատուածներում:

Անվտանգութեան խորհրդի քարտուղար Արմէն Գրիգորեանին յանձնարարուեց միջոցներ ձեռնարկել Հաւաքական անվտանգութեան պայմանագրի 2-րդ յօդուածով նախատեսուած խորհրդակցութիւններ մեկնարկելու ուղղութեամբ, մասնաւորապէս, ՀԱՊԿ-ն որեւէ գործուն քայլ չի րականացրեց խնդրի լուծման համար:

Մայիսի 14-ին յայտնի դարձաւ, որ Վարդենիսի հատուածում ատրպէյճանական ուժերը Հայաստանի պետական սահմանից առաջ են եկել մօտ 2 քմ:

Մայիսի 16-ին Սիւնիքում բանակցութիւններին մասնակցում էր

Արցախում ռուսական խաղաղապահ զօրքերի հրամանատար, գեներալ Ռուստամ Մուրադովը: Դրանից յետոյ որեւէ դրական տեղաշարժ չի գրանցուել:

Մայիսի 21-ին յայտնի դարձաւ, որ ատրպէյճանցի մօտ 30 զինուորներ հատել են սահմանը եւ ներխուժել Սիւնիքի Տեղ համայնքի Խոզնավար գիւղի տարածք:

Մայիսի 27-ին Գեղարքունիքի սահմանային հատուածում ատրպէյճանցիները ՀՀ ՁՈՒ 6 զինծառայողի գերեզմանները:

2021-ի Նոյեմբերին Ատրպէյճանը հերթական անգամ յարձակուեց Հայաստանի ինքնիշխան տարածքի վրայ: Հայկական կողմից զոհուեց 15 անձ, եւս 7 զինծառայող գերեզմաններ:

Նոյեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ ՀՀ 40-45 քառ. քմ տարածք յայտնուել է Ատրպէյճանի վերահսկողութեան տակ:

2022 թ. Մայիսին «Հետքը» գրեց, որ 2021-ի Մայիսին Վարդենիսի հատուածում թշնամին ՀՀ սովորեալ տարածքից օկուպացրել է առնուազան 3200 հեկտար: «Հետքի» Յուլիսին հրապարակած ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ Սեւ լճի հատուածում Ատրպէյճանը վերահսկում է ռազմավարական բարձունքներ եւ 13

Շար.ը էջ 18

Համաշխարհային Պատերազմում Հայաստանի Խորը Եւ Օրինակալի «Կոնտրաստը»

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Օրեր առաջ Երեւանում էր ԱՄՆ առեւտրի դեպարտամենտի գլոպալ շուկաների հարցերով փոխքարտուղար Արուն Վենկատարամանին: Նա հանդիպումներ ունեցաւ Հայաստանի դեկավարութեան, այդ թւում վարչապետի հետ: Նրա այցին յաջորդել էր ԱՄՆ դեսպան Քրիստինա Քուինի գրառումը՝ իր եւ հայաստանցի գործարարների հանդիպումից յետոյ, որ իբրեւ դեսպան, առաջնահերթութիւն է դիտում հայ-ամերիկեան տնտեսական կապի խորացումը: Դեսպանի այդ յայտարարութեանը հասցրեցի անդրադառնալ՝ ԱՄՆ դեսպանի առաջնահերթութիւնն ու գալիֆորնիական բուրգերի «դասը», բայց հայ-ամերիկեան տնտեսական կապի խնդիրը հարկ է դիտարկել նաեւ շատ աւելի լայն իրողութիւնների համատեքստում եւ այդ առումով է նաեւ ուշադրութեան արժանի, որ ներկայիս բարդ համաշխարհային միջավայրում եւ ռեգիոնալ դիւանագիտական-քաղաքական խրթին իրողութիւնների պայմաններում Հայաստան է այցելում Պետքարտուղարի՝ գլոպալ շուկաների հարցերով տեղակալը, հանդիպում ունենալով ամենաբարձր քաղաքական մակարդակում:

Այստեղ հարցերի շրջանակն անկասկած տնտեսական է, տնտեսական կապի մասին է, այլ աշխարհատնտեսական ու աշխարհաքաղաքական: Համաշխարհային պատերազմը, որ ընթանում է այսօր, փլուզում է ոչ միայն գոյութիւն ունեցող համաշխարհային, միջազգային յարաբերութիւնների կար-

գը, այլ նաեւ համաշխարհային տնտեսակարգը, տնտեսական յարաբերութիւնների բնոյթն ու քարտէզը, յարաբերակցութիւնը, լոգիստիկ ամբողջ համակարգը: Դա արտայայտուած է ոչ միայն Ռուսաստանի դէմ պատժամիջոցներով: Դա միայն այսբերգի այսպէս ասած վերելի մասն է: Դրանք շատ աւելի խորքային երեւոյթ են եւ առնչուում են ոչ միայն ՌԴ-Արեւմուտք տնտեսական յարաբերութեան հիմնային վերափոխմանը, այլ նաեւ ներարեւմտեան տնտեսական յարաբերութիւններին եւ Արեւմուտք-Արեւելք տնտեսական յարաբերութիւններին:

Հայաստանն այդ իմաստով գտնուում է իրազմերակուծ, կամ սահմանագծին, ինչը մի կողմից լինելով հնարաւորութիւն ապագայի համար, էական մարտահրաւէր է ներկայիս տեսանկիւնից, երբ ծաւալում է ազդեցութեան, առաւել եւս կարեւոր հանգոյցների վրայ ազդեցութեան շատ կոշտ պայքար: Հայաստանը մեծ հաշուով արեւելեան կամ եւրասիական տնտեսական օրգանիզմի «տիրոջութում» է եւ հարցն այստեղ բոլորովին ԵԱՏՄ կոչուող կառուցը է, այլ եւրասիական տնտեսական օրգանիզմ ասուածի հենց աշխարհատնտեսական եւ աշխարհաքաղաքական սահմանները: Միեւնոյն ժամանակ, քաղաքակրթական, ներքին համակցութեան արժէքանակն եւ գաղափարական ասպեկտով Հայաստանը իրեն դիրքաւորել է եւրասիական օրկանիզմի հանդէպ ներդաշնակութեան հեռանկարում: Ընդ որում, այդ հարցում էականն իհարկէ լոկ ներ-

քին համակցութեան մոտելը է, այլ նաեւ անվտանգութեան բարդ միջավայրում հակակշիռների հնարաւորինս կայուն, կառավարելի խճանկարի ապահովումը:

Սրանք համատեղելը պահանջում է չափազանց հմուտ քաղաքականութիւն եւ այստեղ յոյժ կարեւոր է դառնում հայ-ամերիկեան ոչ միայն գուտ տնտեսական կապի, այլ գլոպալ աշխարհում տնտեսական հաղորդակցութեան սկզբունքների հանգամանքը, որպէսզի այդ կերպ հնարաւոր լինի չէզոքացնել այն կոնտրաստը, որ առաջանում է Հայաստանի այսպէս ասած օրկանական «երկիմաստութեան» պայմաններում, միաժամանակ սրում համաշխարհային պատերազմի հետեւանքով: Այդ խնդիրը Հայաստանում չի կարող լուծուել այն քաղաքական առօրեայի եւ դրա դերակատարների շրջանակում, որ ծաւալում է գերազանցապէս հայկական ֆէյսպուքեան կամ եութիւպեան տարածութիւնում: Աւելին, այդ տարածութիւնն ինքնին գեներացնում է խնդրի լուծման յաւելեալ խոչընդոտներ: Աշխարհատնտեսական խորքային վերափոխումների գնացող աշխարհում Հայաստանի եւ ԱՄՆ լայն տնտեսական հաղորդակցութեան սկզբունքային մշակումները պահանջում են ինստիտուցիոնալ խորքային աշխատանք, այդ թւում թերեւս արտաքին կարող սուբեկտների ներգրավմամբ, որոնք պատրաստ են զբաղուել այդ աշխատանքով առանց ներքաղաքական էպատաժի եւ մանրածախութեան:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY



ԼՈՒՐԵՐ

Պարզուած են 44-օրեայ Պատերազմի Ընթացքին «Արեգա» Բարձունքի Եւ Շուշի Քաղաքի Կորուստին Հանգամանքները. ՔԿ

Պարզուած են 44-օրեայ պատերազմի ընթացքին «Արեգա» բարձունքի եւ Շուշի քաղաքի կորուստին հանգամանքները. բարձրաստիճան սպային վերաբերեալ գործն ուղարկուած է դատարան, կը յայտնէ Քննչական կոմիտէն:

Քննչական կոմիտէն կը մանրամասնէ, որ քննութեամբ հիմնաւորուած է, որ 44-օրեայ պատերազմի առաջին օրերուն՝ 2020-ի Սեպտեմբեր 28-ին, ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող հրամանատարական դիտակէտ հանդիսացող «Արեգա» բարձունքը անցած է Ատրպէյճանի զինուած ուժերու վերահսկողութեան տակ:

Սեպտեմբեր 29-ին՝ ժամը 07-ի սահմաններուն, ըստ հաղորդագրութեան, Հայկական ստորաբաժանումներուն կողմէ ձեռնարկուած է հակազոր, որու հետեւանքով նոյն օրը՝ ժամը 09:50-ին գոհեր եւ վիրաւորներ տալու գնով, կարելի եղած է վերահսկողութեան տակ վերցնել «Արեգա» բարձունքը:

Քննչական կոմիտէն կը հաղորդէ, որ նոյն օրը՝ ժամը 16-ի սահմաններուն, բարձրաստիճան սպան «Արեգա» բարձունքի միջնամասին մէջ, հանդիպած է հակազորի գործողութիւնը ղեկավարած զօրամասի հրամանատարի տեղակալներուն, գործողութեան մէջ ներգրաւուած ստորաբաժանման ղեկավարին եւ տեղեկացուցած է իրադրութեան մասին, որ «Արեգա» բարձունքը, յարակից մարտական դիրքերը, հակառակորդի թիկունքային ապահովման ճանապարհը կը գտնուին իւրային ստորաբաժանումներու վերահսկողութեան տակ: Մ.Ա.-ն օժտուած չըլլալով հակազորի գործողութեան մէջ ընդգրկուած ստորաբաժանումներու անձնակազմին հրամաններ տալու լիազօրութեամբ, գործողութիւնը փաստացի ղեկավարող սպային անհիմն հրամայած է ենթակա անձնակազմին հետ միասին թողել ազատագրած «Արեգա» բարձունքը եւ նահանջել:

Նոյն օրը՝ ժամը 23:00-ի դրութեամբ, հակառակորդը վերահսկողութեան տակ վերցուցած է բար-

ձունքը, յարակից մարտական դիրքերը՝ զբաղեցնելով գերիշխող դիրք:

Իրաւապահ մարմինը մանրամասնութիւններ կը յայտնէ նաեւ Շուշի քաղաքի գրաւման մասին, մասնաւորապէս նշելով, որ քննութեամբ հիմնաւորուած է նաեւ, որ 2020-ի Հոկտեմբեր 27-ին, հակառակորդի ստորաբաժանումները յաջողած են տիրել Արցախի Ասկերանի շրջանի Աւետարանոց գիւղին, որմէ յետոյ բարձրաստիճան սպային կողմէ նոյն օրը գրաւոր կազմուած փաստաթուղթին մէջ նշուած է, որ հակառակորդի ստորաբաժանումներուն նպատակը կը հանդիսանայ Շուշի բնակավայրին տիրելը:

Հաղորդագրութեան մէջ նշուած է՝ պարզուած է, որ անհրաժեշտ պաշտպանութիւն կազմակերպելու համար բարձրաստիճան սպան Հոկտեմբեր 30-31-էն հնարաւորութիւն ունեցած է կիրառելու սակայն չէ օգտագործած ընդհանուր շուրջ 550 զինուորներէ բաղկացած թիկուղ 4 ստորաբաժանում, որոնք տուեալ ժամանակահատուածին ներգրաւուած չեն եղած ինչպէս Շուշիի, այնպէս ալ որեւէ այլ ուղղութեամբ մարտական խնդիրներու կատարման մէջ:

Բացի անկէ, բարձրաստիճան սպան, Քննչականին փոխանցմամբ, մինչեւ 2020-ի Նոյեմբեր 6 ներառեալ վերադասին գրաւոր կարգով զեկուցած է, որ կը շարունակէ խնդիրը կատարել, այդ շարքին՝ Շուշի քաղաքին ուղղութեամբ, իրադրութիւնը ներկայացուցած է բարդ, բայց վերահսկելի, եւ այդպէս պայմաններուն մէջ, որ Նոյեմբեր 5-ին՝ երեկոյեան, հակառակորդին խումբերը յաջողած են ներթափանցել Շուշի:

Զօրավարի զինուորական կոչում կրող սպային՝ Մ.Ա.-ի նկատմամբ յարուցուած է հանրային քրէական հետապնդում: Վերջինիս նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանաւորումը:

Նախաքննութիւնը աւարտած է, հսկող դատախազը հաստատած է մեղադրական եզրակացութիւնը եւ գործը ուղարկուած է դատարան:

Հակափտածութեան Կոմիտէն Լրացուցած Է Յովիկ Աբրահամեանի Մեղադրանքը

Հակափտածութեան կոմիտէն լրացուցած է նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանի մեղադրանքը: Գլխաւոր Դատախազութիւնը Հակափտածութեան կոմիտէին առաջարկած էր 2018-էն պաշտօնական լիազօրութիւնները անցնելու, ձեռնարկատիրական գործունէութեան ապօրինի մասնակցելու յօդուածներով մեղադրուող նախկին վարչապետի մեղադրանքին աւելցնել եւս մէկը՝ դրամներու լուսցումը: Աբրահամեանը, որ ժամանակին Հայաստանի ամենազղեցիկ պաշտօնեաներէն էր, երկրէն չբացակայելու արգելք ունի:

Հինգ տարի առաջ այս գործը յարուցելով իրաւապահները յայտարարած էին, թէ տուեալներ ունին, որ Աբրահամեանը, ինչպէս նաեւ նախկին ոստիկանապետ, Արարատի նախկին մարզպետ Ալիկ Սարգսեանը անցած են իրենց լիազօրութիւնները:

Աւագի հանքը շահագործող «Աւագահատիկ» ընկերութեան



Նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեան

տնօրէն Գէորգ Գէորգեանը հինգ տարի առաջ ցուցմունք տուած ու յայտնած էր, որ Ալիկ Սարգսեանը, Յովիկ Աբրահամեանն ու անոր եղբայրը՝ Հենրիկ Աբրահամեանը խլած են իր ընկերութեան բաժնե-

Դատախազութիւնը Կը Միջնորդէ Վազգէն Մանուկեանին Տուգանել 500 Հազար Դրամ

Վազգէն Մանուկեանի գործով դատական նիստին դատախազ Արմէն Գէորգեանը մեղադրական ճառի ժամանակ միջնորդեց պատերազմէն յետոյ ստեղծուած ընդդիմադիր «Հայրենիքի Փրկութեան Շարժումը» առաջնորդած ընդդիմադիր գործիչը տուգանել նուազագոյն աշխատավարձի 500-ապատիկի չափով:

77-ամեայ Մանուկեանը կը մեղադրուի իշխանութիւնը գաւթելուն եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղուած հրապարակային կոչերու համար: Ընդդիմադիր գործիչը, սակայն, չ'ընդունիր իրեն առաջադրուած մեղադրանքը:

Դատախազը յայտնեց, որ պատիժը մեղմացնող հանգամանք եղած են Մանուկեանի տարիքը, նախապէս անոր զբաղեցուցած պաշտօնները:

Արմէն Գէորգեանը դատարանէն նաեւ պահանջեց մինչ դատավճռի հրապարակումը անփոփոխ թողել ամբաստանեալին նկատմամբ կիրառուած խափանման միջոցը՝ ստորագրութիւնը չհեռանալու մասին:

Մինչ մեղադրող կողմը կը յայտարարէ, որ մեղադրանքը ապացուցուած է, պաշտպանական կողմը



Նախկին վարչապետ Վազգէն Մանուկեան

կը պնդէ, որ Մանուկեանի յայտարարութիւնները չեն կրնար համարուիլ իշխանութիւնը գաւթելուն եւ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղուած հրապարակային կոչեր: Ըստ պաշտպան էրիկ Ալեքսանեանի՝ անոնք բռնութեան ուղերձներ չեն, այլ՝ քաղաքական քննադատութիւն:

Պաշտպանական կողմը խնդրեց արդարացնել Վազգէն Մանուկեանը: Նիստը յետաձգուեցաւ, յաջորդը նշանակուեցաւ Ապրիլ 29-ին:

Հայաստանի Սահմանը Ապօրինի Հատած Ատրպէյճանցի Ձիւնուորներուն Նկատմամբ Յարուցուած Է Հանրային Քրէական Հետապնդում

ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան քննչական գլխաւոր վարչութեան մէջ նախաձեռնուած քրէական վարույթով հսկող դատախազին կողմէ բաւարարուած է վարույթը իրականացնող քննիչին միջնորդութիւնը. 2023 թուականի Ապրիլ 11-ին որոշում կայացուած է Ատրպէյճանի քաղաքացի Ակչին Կապիլի Պապիրովի նկատմամբ խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու եւ խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ, մաքսային հսկողութենէն թաքցնելով, ՀՀ պետական սահմանով հրազէն եւ ռազմամթերք ապօրինի տեղափոխելու հանրօրէն վտանգաւոր արարքներ կատարելու համար յարուցել հանրային քրէական հետապնդում: Ապրիլ 14-ին հսկող դատախազին կողմէ բաւարարուած է վարույթը իրականացնող քննիչին միջնորդութիւնը. որոշում կայացուած է Ատրպէյճանի քաղաքացի Հուսէյն Ահլիմանի Ախունտովի նկատմամբ խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ ՀՀ



Ատրպէյճանի բանակայինը քաղաքացիներու կողմէ յայտնաբերու պահուց

պետական սահմանը ապօրինի հատելու, խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ, մաքսային հսկողութենէն թաքցնելով, ՀՀ պետական սահմանով հրազէն եւ ռազմամթերք ապօրինի տեղափոխելու եւ խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ ապօրինի հրազէն պահելու եւ փոխադրելու հանրօրէն վտանգաւոր արարքներ կատարելու համար յարուցել հանրային քրէական հետապնդում:

Դատախազութիւնը նշուած հարցին առնչութեամբ պարբերաբար հանդէս պիտի գայ հաղորդագրութիւններով:

տոմսերու 60 տոկոսը: Իրաւապահները կը պնդեն, որ 2008-էն մինչեւ 2015 թուականը Յովիկ Աբրահամեանը հանքէն ստացած 230 միլիոն դրամի ապօրինի եկամուտները թաքցնելու նպատակով այդ գումարը միախառնած է իր այլ եկամուտներուն հետ, ապա

գնած է տարբեր տեսակի գոյք, կատարած է դրամատնային գործարքներ եւ այդ դրամներուն հաղորդած է օրինական տեսք: 12 տարի անց՝ 2020-ին հանքը վերադարձուած է Գէորգեանի ընտանիքին, երբ այս հարցով արդէն կը զբաղէին իրաւապահները:



# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանը Արտաքին Քաղաքական Սլաք Չի Փոխեր. Արմեն Գրիգորեան

Հայաստանը արտաքին քաղաքական սլաք չի փոխեր: ՀԱՊԿ-ին եւ Ռուսիային չստանալով ակնկալուող աջակցութիւնը՝ Հայաստանը անվտանգութեան այլ երաշխիքներ կը փնտռէ. ըսած է Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեանը «Միվիլինեթ»-ի հետ զրոյցին:

Արձագանգելով Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումը փոխելու մասին ուսուսական կողմէ հնչող կասկածներուն եւ յայտարարութիւններուն՝ ԱՊՔ քարտուղարը յիշեցրեց, որ 2018 թուականի Թաւշեայ չեղափոխութենէն յետոյ Հայաստանը յայտարարած էր, որ արտաքին քաղաքականութեան ոլորտին մէջ որեւէ փոփոխութիւն պիտի չկատարէ:

«Իսկապէս այդպէս է եղել: Ես որպէս պաշտօնեայ մինչեւ 2021 թուականի Դեկտեմբերը որեւէ արեւմտեան մայրաքաղաքում չեմ եղել, որեւէ պաշտօնակիցի հետ չեմ հանդիպել որպէս Անվտանգութեան խորհուրդի քարտուղար: Սա մեր արտաքին քաղաքականութեան դիրքորոշումն էր եւ վարման ցուցիչ է եղել», կը նշէ Գրիգորեան:

Փոխարէնը ան եղած է Պիշքեքի, Ասթանայի, Մոսկուայի, Թեհրանի, Տեղհի մէջ եւ այլուր: Նոյնիսկ 2020 թուականի պատերազմէն յետոյ Հայաստանի անվտանգութեան խոցելիութեան պայմաններուն մէջ արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւններ չեն կատարուած:

«Մենք Ռուսաստանի հետ խօսել ենք, պայմանաւորուածութիւններ ենք ձեռք բերել: Օրինակ, որ Հայաստանի սահմանը «կարմիր գիծ» է, Հայաստանը պատրաստ է սերտ համագործակցութեան եւ այլն: Դրանից յետոյ 2021 թուականի Մայիսին եւ Նոյեմբերին Հայաստանի վրայ երկու յարձակում է տեղի ունեցել եւ մեր առջեւ խնդիր է առաջ եկել՝ մտածել մեր անվտանգութեան միջավայրի մասին», կը նշէ Արմեն Գրիգորեանը:

Հայաստանի արտաքին քաղաքականութեան ներկայիս ուղենիշը ան կ'անուանէ «այլընտ-



Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեան

րանքներու փնտռումը», իսկ Հայաստանը ՀԱՊԿ-ին դուրս բերելու մասին դիտարկումներուն ու կասկածներուն կը հակադարձէ. «Մենք օգնութեան համար ՀԱՊԿ-ին դիմել ենք 2021 թուականի Մայիսին, Նոյեմբերին եւ այդպէս շարունակ: Եւ երբ որ օգնութիւն չենք ստացել, մենք այդ ժամանակ ենք փորձել այլընտրանքներ փնտռել: Երբ մեզ մեղադրում են, որ մենք արտաքին քաղաքականութիւնն ենք փոխում, ես առաջինը նրանց կը մեղադրեմ: Դուք մտածէ՞ք՝ մենք ձեզնից ենք առաջինը օգնութիւն խնդրել, ձեզ ենք ասել՝ մեր հարցը 2021 թուականի Մայիսին լուծէ՞ք, Նոյեմբերին լուծէ՞ք: Երբ տեսել ենք՝ չէք լուծում, զնայցել ենք անվտանգութեան երաշխիքներ փնտռելու»:

Զրոյցի ընթացքին Գրիգորեան արձագանգած է նաեւ ռուս փորձագէտներու եւ որոշ պաշտօնեաներու յայտարարութիւններուն առ այն, թէ ինչ աջակցութիւն պէտք է ակնկալել Ռուսիային, քանի դեռ Հայաստանը Ատրպէյջանի հետ բախումներուն ժամանակ ոչ ռազմական դրութիւն յայտարարած է, ոչ ալ՝ զօրահաւաք:

«Երբ ցանկանան օգնել, հազար պատճառ կը գտնեն օգնելու, երբ չցանկանան օգնել, հազար պատճառ կը գտնեն չօգնելու», կը նկատէ Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղարը:

## Չաւուշօղլուն Անդրադարձած է Տեղ Գիւղին Մէջ Տեղի Ունեցած Ատրպէյճանական Սադրանքին

Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեւլութ Չաւուշօղլուն «HaberTurk TV»-ի հետ զրոյցի ընթացքին անդրադարձած է այսպէս կոչուած «Չանգեզուրի միջանցքին», քանի մը օր առաջ Տեղ գիւղին մէջ տեղի ունեցած ատրպէյճանական սադրանքին եւ անհիմն մեղադրանք հնչեցուցած է Հայաստանի հասցէին:

«Ի վերջոյ, այս լարուածութիւնը մէկ կողմ թողնելով, անհրաժեշտ է պահ առաջ համապարփակ խաղաղութեան պայմանագիրը ստորագրել, ինչպէս նաեւ կառուցել այդ անցումները, ճանապարհները, որոնք նաեւ Հայաստանի օգտին են, բոլորիս օգտին են»:

Անդրադառնալով իրանի ունեցած առնչութեան այդ ամէնին՝ ան ըսած է.

«Իրանն ալ նախապէս իր



Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեւլութ Չաւուշօղլու

տարածքով դէպի Նախիջան կապուղիներու կառուցման միտքը ունէր: Իրականութեան մէջ մենք

## Փաշինեան Ընդունած է ԵԱՀԿ Գործող Նախագահի՝ Պուլար Օսմանիի



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ ԵԱՀԿ գործող նախագահ Պուլար Օսմանի

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԵԱՀԿ գործող նախագահ, Հիւսիսային Մակեդոնիոյ արտաքին գործերու նախարար Պուլար Օսմանիին:

Վարչապետը ողջունած է ԵԱՀԿ գործող նախագահին այցը տարածաշրջան եւ նշած, որ այն լաւ հնարաւորութիւն է ծանօթանալու այստեղ ստեղծուած բարդ իրավիճակին: Նիկոլ Փաշինեանը նշած է ՀՀ կառավարութեան շահագրգռուածութիւնը՝ զարգացնելու եւ ընդլայնելու համագործակցութիւնը ԵԱՀԿ-ի հետ:

Պուլար Օսմանին, իր հերթին, եւս ընդգծած է Հայաստանի հետ փոխգործակցութեան կարեւորութիւնը եւ յաւելած, որ կազմակերպութեան նպատակն է նպաստել տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան:

Զրուցակիցները քննարկած են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան, Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով ԼՂ-ի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին, Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ սահմաններու սահմանազատման իրականացման վերաբերող հարցեր:

Անդրադարձ կատարուած է ԵԱՀԿ Մինսքի խումբի գործունէութեան եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչի աւելի աշխոյժ դերակատարութեան ապահովման:

Վարչապետ Փաշինեան կարեւորած է միջազգային հանրութեան կողմէ Ատրպէյջանի սադրիչ եւ ապակառուցողական գործողութիւններուն համարժէք ու հետեւողական արձագանգը:

## Եթէ Մենք Չկուուինք, Ինչքան Կ'ուզէ Թող Ռուսիոյ ԱԳՆ-ն Աջ Ու Չախ Չանգէր. Քոչարեան Զախարովայի Յայտարարութեան Մասին

ՀՀ Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան կը յայտնէ, որ Տեղ գիւղի հատուածին մէջ ատրպէյճանական ներխուժումը կասեցնելու հարցով Ռուսիան ինչ-որ ձեւաչափով մասնակցած է, սակայն խնդիրը լուծուած է առաջին հերթին Հայաստանի Զինուած ուժերու գործողութիւններուն շնորհիւ:

Քոչարեանը այս մասին ըսաւ խորհրդարանական ճեպազրոյցին ընթացքին՝ անդրադառնալով Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի յայտարարութեան, որ Ռուսիան քայլերու ձեռնարկած է՝ լարուածութիւնը թուլացնելու համար, մասնակցութիւն ունեցած է դադրեցնելու գործին մէջ:

«Կասկածի տակ չեմ դնում Մարիա Զախարովայի ասածները, որ ՌԴ-ն ինչ-որ ձեւաչափով մասնակցել է, բայց, այնուամենայնիւ, կուուել է ՀՀ Զինուած ուժերը: Եթէ մենք չկուուինք, զոհեր չտայինք, ինչքան ուզում է թող ՌԴ արտաքին գերատեսչութիւնն ալ ու ձախ



ՀՀ Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

զանգեր անէր, դա խնդրի լուծման չէր տանելու: Խնդիրը լուծուել է առաջին հերթին մեր Զինուած ուժերի եւ մեր զինուորականութեան քաջարի գործողութիւնների արդիւնքում», ըսաւ պատգամաւորը:

անոր ալ կ'աջակցին: Քանի որ մշտապէս տարբեր այլընտրանքներ պէտք է ըլլան: Մէկ տեղին կապուած ըլլալը վտանգային է, այլընտրանքներ պէտք է ըլլան: Այսինքն, այս ծրագրին իրականա-

ցումը Հայաստանի գլխաւորութեամբ բոլորի օգտին է»:

Չաւուշօղլուն նաեւ անհիմն պնդումներ յառաջ քաշած է. թէ իբր Հայաստանը փորձած է «զէնք տեղափոխել Լեւոնային Ղարաբաղ»:



### ԿԳՄՍ-ին Յայտարարութիւնը Ատրպէյճանի Դրօշին Հետ Կապուած Միջադէպին Առնչութեամբ



Ապրիլ 14-ին, Երեւանի Կարեն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ Ծանրամարտի Եւրոպայի ախոյեանութեան բացման հանդիսաւոր արարողութեան ժամանակ հագուստի ձեւաւորող Արամ Նիկողեանը այրած էր Ատրպէյճանի դրօշը:

Այս կապակցութեամբ Հայաստանի ԿԳՄՍ նախարարութիւնը հրատարակեց պարզաբանում. «Որպէս Ծանրամարտի Եւրոպայի 2023 թուականի ախոյեանութիւնը հիւրընկալող կողմ լուրջ մտահոգութեամբ ենք ընդունել Ապրիլի 14-ին առաջնութեան բացման արարողութեան ժամանակ Ատրպէյճանի Հանրապետութեան պետական դրօշի հետ կապուած միջադէպը: Միջադէպը, որն արարողութեան ժամանակ անմիջապէս հարթուել է եւ որեւէ կերպ չի խոչընդոտել բնական ընթացքին, չի արտայայտում Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների դիրքորոշումը եւ դատապարտելի է մարզական արժէքների եւ արդար խաղի (Fair Play) համընդհանուր սկզբունքների տեսանկիւնից:

Միաժամանակ, փոստսանքով ենք արձանագրում Ատրպէյճանի խումբի՝ առաջնութիւնը լքելու վերաբերեալ կայացրած որոշումը եւ յաւելում, որ անվտանգութեան հետ կապուած որեւէ խնդիր չի եղել, քանի որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն ի սկզբանէ ապահովել է եւ շարունակում է ապահովել անվտանգութեան բոլոր չափանիշներն առաջնութեան մասնակից պատուիրակութիւնների համար: Կառավարութիւնը հաւատարիմ էր լրացուցիչ անվտանգային միջոցառումներ ապահովելու ատրպէյճանցի մարզիկների համար նախկինում իր կողմից ստանձնուած պարտաւորութեանը: Դրա վկայութիւնն

այն է, որ գրեթէ երկու օր ատրպէյճանցի մարզիկներն անվտանգ եւ ապահով գտնուել են Հայաստանում, իսկ ախոյեանութիւնը լքելու որոշումն ընդունելուց յետոյ համապատասխան ծառայութիւններն ապահովել են նրանց անվտանգ մեկնումը:

Այս ախոյեանութեանը պատրաստուելիս Հայաստանի Հանրապետութիւնն իրականացրել է մեծածաւալ աշխատանք եւ նշանակալի ներդրումներ: Կացութեան, մարզումների, մրցումների պայմանները, տեխնիկական ապահովումը, հեռուստատեսային ցուցադրութիւնը, նախադէպը չունեցող բացման արարողութիւնն ամենաբարձր գնահատականի են արժանացել մեր միջազգային գործընկերների կողմից: Բազմաթիւ արձանագրումներով՝ Հայաստանում անցկացուող Եւրոպայի այս առաջնութիւնն իր կազմակերպմամբ վստահօրէն կարող է մրցել աշխարհի ախոյեանութիւնների կազմակերպման հետ: Համոզուած ենք, որ մրցաշարի աւարտից յետոյ կը կարողանանք արձանագրել, որ Հայաստանը կարող է յաւակնել կազմակերպելու աւելի մեծ մրցաշարեր, այդ թւում՝ աշխարհի առաջնութիւնը»:

Աւելի ուշ յայտնի դարձաւ, որ դրօշը այրող Արամ Նիկողեանը հեղինակած եւ կարած է Ծանրամարտի Եւրոպայի ախոյեանութեան բացման հանդիսաւոր արարողութեան ներկայ ներկայացուցիչներուն զգեստները, այդ շարքին՝ Ատրպէյճանի դրօշովը:

«Հայկական ժամանակ»-ի տեղեկութիւններով՝ ներկայացուցիչներուն զգեստները հեղինակելու եւ կարելու համար Արամ Նիկողեանը, ըստ պայմանագրին, պիտի ստանայ 18,9 միլիոն դրամ, որմէ 12,3 միլիոն դրամը արդէն ստացած է:

### Սպառազինութեան Նոր Նմոյշներու Ձեռք Բերման Համար Հայաստանը 2022-ին Ընդլայնած Է Համագործակցութեան Շրջանակը



Հայաստանը նախորդ տարի սպառազինութեան եւ ռազմական սարքերու արդիականացման եւ նոր նմոյշներու ձեռք բերման գործընթացներու իրագործման համար ընդլայնած է ռազմատեխնիկական համագործակցութեան շրջանակը, կնքուած են 3 տասնեակէ աւելի պայմանագրեր:

Այս մասին կ'ըսուի «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ծրագրի (2021-2026 թթ.) 2022 թուականի կատարման ընթացքի եւ արդիւնքներու մասին» զեկոյցին մէջ:

Կը նշուի, որ բանակի բարեփոխումներուն ուղղութեամբ կ'իրականացուին լայնածաւալ աշխատանքներ: Մասնաւորապէս 2022 թուականին ընթացած են ՀՀ Զինուած Ուժերու, Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի ստորաբաժանումներու կազմակառուցուած քայլին փոփոխութիւնները, պայմանագրային զինուորներուն համար սահմանուած է լրավճար՝ անոր հաշուարկման համար նախատեսելով քննութեան գործընթաց, որու արդիւնքով կը նախատեսուի զինուորներու աշխատավարձերու կրկնապատկում, սահմանուած է պարտադիր

զինուորական ծառայութեան պայմանագրային զինուորական ծառայութեան փոխադրման նոր կարգ՝ «պաշտպան հայրենեաց» ծրագրի իրականացման միջոցով:

Զեկոյցին մէջ կը նշուի նաեւ, որ սպառազինութեան եւ ռազմական սարքերու արդիականացման եւ նոր նմոյշներու ձեռքբերման գործընթացներու իրագործման համար ընդլայնուած է ռազմատեխնիկական համագործակցութեան շրջանակը եւ կնքուած են 3 տասնեակէ աւելի պայմանագրեր:

ՀՀ պետական սահմանի հայատրպէյճանական սահմանի տեղամասի պահպանութեան պատշաճ կազմակերպման համար ձեռք բերուած են անհրաժեշտ համակարգեր, ճարտարապետական, շինարարական, ուսումնական եւ այլ միջոցներ:

ՀՀ Զինուած Ուժերու օդադնացութիւնը համալրուած է ժամանակակից բազմագործօն նոր ուղղաթիւներով, շարունակուած է տեսադիտարկման համակարգերու տեղադրումը՝ գանոնք համակցելով ընդհանուր ցանցին եւ հասցնելով ՀՀ Զինուած Ուժերու գործնական կառավարման կեդրոն:

### Ատրպէյճանի Հետ Ռազմական Հաւասարակշռութիւնը

Շարունակուած էջ 1-էն

կառավարութեան նախորդ տարուան ծրագրի կատարման զեկոյցը ներկայացնելու ընթացքին յայտնեց վարչապետ Փաշինեան:

«Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագիրն իրատեսական կը դառնայ, եթէ երկու երկրները յստակ, առանց երկիմաստութիւնների եւ որոգայթների միմեանց տարածքային ամբողջականութիւնը ճանաչեն եւ պարտաւորուեն այսօր եւ երբեք միմեանց տարածքային պահանջներ չներկայացնել: Ես հիմա ուզում եմ վերահաստատել, որ Հայաստանի Հանրապետութիւնը լիարժէք ճանաչում է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, եւ ակնկալում ենք, որ Ատրպէյճանը նոյնը կ'անի՝ Հայկական ՌՄՀ ամբողջ տարածքը ճանաչելով որպէս Հայաստանի Հանրապետութիւն», ըսաւ ան:

Միեւնոյն ժամանակ հնարաւոր պայմանագրի իրագործման երաշխաւորման համար անհրաժեշտ է, որ ձեւաւորուին միջազգային մեխանիզմներ, յայտարարեց Փաշինեան. «Հակառակ դէպքում՝ պայմանագրի ստորագրման

յաջորդ օրը կարող է պատերազմ բռնկուել կամ նոր մագլցում տեղի ունենալ: Կարեւոր է նաեւ կողմերի միջեւ ծագած վէճերի լուծման մեխանիզմների գոյութիւնը, որ եթէ կողմերը ի վիճակի չլինեն ծագած խնդիրները՝ պայմանագրի բնագրի մեկնաբանութիւնների հետ կապուած, ուղիղ բանակցութիւններով լուծել, լինի ատեան, որը դա կ'անի, եւ որի որոշումը պարտադիր լինի կողմերի համար»:

Ի՞նչ սահմաններով Հայաստանն ու Ատրպէյճանը պէտք է ճանչնան միմեանց տարածքային ամբողջականութիւնը, Փաշինեանը խօսեցաւ հայկական եւ ատրպէյճանական ՌՄՀ-ների սահմաններուն մասին, սակայն առանց յստակացնելու, թէ բանակցութիւններու ընթացքին որ թուականի սահմանները հիմք կ'ընդունուին:

«Մենք ինքներս ենք առաջարկել, որ պայմանագրին կցուեն Հայկական եւ Ատրպէյճանական ՌՄՀ-ների՝ ՌՄՀ կողմից հաստատուած քարտէզները՝ որպէս երկու երկրների տարածքային ամբողջականութեան հիմք: Բայց այստեղ է, որ հասնում ենք ամենամեծ ու ամենաբարդ խնդրին՝ Լեւոնային Ղարաբաղին», շեշտեց Փաշինեան:

### Հայաստանը Եւրոպայի Եւ Կեդրոնական Ասիոյ Ամենաարագ Աճող Երկիրն Է. Համաշխարհային Դրամատուն

Հայաստանը Եւրոպայի եւ Կեդրոնական Ասիոյ ամենաարագ աճող երկիրն է. կը նշուի Համաշխարհային դրամատան տարածաշրջանային նոր զեկոյցին մէջ: Ըստ կառուցչին՝ Հարաւային Կովկասը Հայաստանի արձանագրած կտրուկ աճին շնորհիւ կրցած է 2022 թուականին գերազանցել 2021-ի տնտեսական աճի ցուցանիշը: Յատկապէս ընդգծ-



ուած է Հայաստանի արտահանման առաջանցիկ աճը:



### Շքեղ ճաշկերոյթի Սը Ընթացքին



Յովնան Արք. Տերտրեանց Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով կը զարդարէ Արտեմ Փաթափուեանի լամբակը (photo by Arka Photography)

#### Շարունակուած էջ 1-էն

մի առաջնորդ Յովնան Արք. Տէրտրեան կատարեց բացման աղօթքը, որուն յաջորդեց տարբեր երկիրներու մէջ ՀԲԸՄ-ի իրականացուցած մարդասիրական աշխատանքներուն նուիրուած տեսաերիզի ցուցադրութիւնը:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ՝ բարերար Երուանդ Տէմիրճեանը:

Ներկաները յոտնկայս ունկնդրեցին Յովնան Սրբազանի կողմէ ընթերցուած՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Դոքթ. Փաթափուեանին կը շնորհուէր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանը:

Երեկոյցի ընթացքին ՀԲԸՄ-ի նախագահ Տիար Պերճ Սեդրակեան Արտեմ Փաթափուեանի ծնողներուն՝ Սարգիս եւ Ազատուհի Փաթափուեաններուն յանձնեց գնահատագիրներ, անոնց ունեցած գրական եւ կրթական երկարամեայ վաստակին համար՝ ՀԲԸՄ-ի Լիբանանի վարժարաններէն ներս:

ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչ-

չութեան անդամ՝ Դոկտ. Երուանդ Զորեան ներկայացուց պատուի արժանացող գիտնականը, որ կը հանդիսանայ ՀԲԸՄ-ի պարծանքը, որպէս կազմակերպութեան դպրոցներէն ու մարզական խումբերէն ներս հասակ նետած պատանի ու երիտասարդ, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի բերումով՝ ծնող-

ներուն հետ զաղթած է Ամերիկա՝ հասնելով բարձունքներու:

Այս առթիւ ցուցադրուեցաւ տեսաերիզ մը նուիրուած Արտեմ Փաթափուեանի կեանքին ու գործունէութեան:

ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան ելոյթ ունենալով ըսաւ թէ, ՀԲԸՄ-ի համաշխարհային ընտանիքին կողմէ եւ անկէ անդին, մեծ հպարտութեամբ եւ գոհունակութեամբ կը շնորհակտորէ 2021-ի բժշկութեան մէջ Նոպէլեան մրցանակի արժանացած մեծարեալին:

«Այսօր, կը նշենք ՀԲԸՄ-ի հիմնադրութեան 117-րդ ամեակը եւ անոր առաքելութիւնը՝ նպաստելու Հայութեան բարգաւաճման եւ համայնքներու մնացուն յառաջդիմութեան՝ ներդրում կատարելով անոնց առաքինի եւ մտաւորական զարգացման ուղղութեամբ: Դոկտ. Փաթափուեան քու իրագործումովդ նշաձող բարձրացուցիչ մեր նպատակներուն համար», իր խօսքը եզրափակելով ըսաւ ՀԲԸՄ-ի նախագահը:

Բեմ բարձրանալով բարերար վաչէ Մանուկեան եւ Պերճ Սեդրակեան օրուայ մեծարեալին յանձնեցին յատուկ յուշանուէր, որմէ

ետք շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Դոկտ. Փաթափուեան: Ան իր խօսքը սկսաւ շնորհակալութիւն յայտնելով իր ծնողներուն տրուած գնահատանքին համար եւ ըսաւ որ, անոնք եղած են զինքը քաջալերողները, իր կեանքի ապարհզի ընտրութեան ընթացքին:

Նոպէլեան մրցանակակիրը անդրադարձաւ Հայաստան իր կատարած այցելութեան եւ հոն իր նկատմամբ ցուցաբերուած յարգանքին, որ իր մօտ առաւել եւս ամրապնդեցին հայրենասիրական ոգին:


«Հայաստան քարիւղ չունի, բայց ունի մարդկային ներուժ, որոնք էական են Հայաստանի տնտեսական զարգացման համար, այդպիսով երկիրը պիտի դառնայ ուժեղ եւ բարգաւաճ», իր խօսքի աւարտին ըսաւ Արտեմ Փաթափուեան, կոչ ընելով ներկաներուն թիկունք կանգնելու ՀԲԸՄ-ին եւ այլ կազմակերպութիւններու, որոնք շեշտը կը դնեն ուսման վրայ:

Հանդիսութեան պաշտօնական բաժնի աւատին երաժշտական կատարումներով հանդէս եկաւ Լիբանանահայ յայտնի երգահան Կի Մանուկեան, ընկերակցութեամբ իր նուագախումբին:

## PUBLIC DISCUSSION

Organized by

**MASSIS PUBLISHING**



### SD Hunchakian Party after the 1908 Young Turk Revolution: Theory and Practice



**Prof. Yaşar Tolga Cora**



AEBU Center  
1060 N. Allen Avenue  
Pasadena, CA 91104

Starting at 8:00 pm • Wednesday

**April | 26 | 2023**

Invitation

### Ապրիլ 24-ի Նախօրեակին

#### Շարունակուած էջ 1-էն

հայութիւնը ստիպողաբար հեռանայ իր հայրենիքէն՝ մերժելով ապրիլ ազերի իշխանութեան լուծին տակ: Դեռաւոր նպատակը կը մնայ նոյնը. «Ձանգեզուրի Սիջանցք» անուան տակ փոքրացնել Հայաստանը ու գործադրութեան դնել թուրքազգ ժողովուրդներուն միացման փանթուրանական ծրագիրը:

Հայ ժողովուրդը թէւ ներկայիս կանգնած է դժուար մարտահրաւերներու առջեւ, սակայն մեր թշնամիները պիտի չկարողանան հասնիլ իրենց վերջնական նպատակներուն: Այդպէս եղած է մեր ամբողջ պատմութեան ընթացքին ու այդպէս պիտի շարունակէ մնալ արդի ժամանակներուն՝ շնորհիւ մեր ժողովուրդի անկոտրում կամքին ու իր նահատակներէն փոխանցուած կտակին, որուն կը մնանք ազգովին հաւատարիմ:

Անգամ մը եւս կը խոնարհիմք մեր սրբացած նահատակներուն յիշատակին առջեւ ու կը շարունակենք պահանջել՝ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**  
«ՄԱՍԻՍ»



# Ապրիլ 24 Մենք եւ Մեր Դժբախտութիւնները

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Վերելի խորագիրը մի քանի անգամ փոփոխութեան ենթարկեցինք, որովհետեւ երբ ամիս մը առաջ սկսանք գրի առնել մեր այս խորհրդածութիւնները, շատ վստահ չէինք, որ ուր պիտի առաջնորդէին մեզ եւ ի՞նչ եզրակացութեան պիտի յանգէինք: Մենք որոշած էինք, որ փոխանակ մի քանի ժամուայ վրայ ամփոփելու մեր խորհրդածութիւնները, մէկ ամսուայ վրայ պարբերաբար մտածէինք մեր արծարծելիք հարցի մասին, արձանագրէինք մեր տպաւորութիւնները եւ ըստ այնմ վերանայէինք խորագիրը: Հարցը հետեւեալն է. «Մեր ազգի գլխուն եկած դժբախտութեանց աղբիւրը որքանո՞վ արտաքին ուժերէ եկած է եւ որքանո՞վ՝ ներքին»:»

Ընդունինք, որ հարցը շատ խրթին է եւ կարելի չէ յօդուածի մը սահմաններուն մէջ սպառնալից պատասխան տալ: Բայց եթէ յաջողինք այս մասին մտքեր հրահրել, հոգեկան բաւարարութիւնը պիտի ունենանք, որ մեր յօդուածը իր նպատակին ծառայած պիտի ըլլայ:

Հազարամեակներու պատմութիւն ունեցող եւ երկու հազարամեակ առաջ Հռոմէական եւ Պարսկական կայսրութեանց միջեւ երրորդ ուժ հանդիսացող Հայկական պետութիւնը ինչո՞ւ «փոքր ածու»ի վերածուեցաւ եւ պարտութիւնէ պարտութիւն երթալով պարզապէս գոյութիւն մը քարշ տուաւ, պարբերական փայլատակումներով: Այս մասին «Մասիս»-ի 2011 Ապրիլ 23 եւ 30 թիւերուն մէջ գրած ըլլալով, զանց կ'առնենք կրկնութիւններ կատարելէ, թուելով միայն ենթախորագիրները. Հայաստանի աշխարհագրական դիրքն ու շրջապատը, անկախ պետականութեան գիտակցութիւն, արտագաղթ, ձուլում եւ կրօնափոխութիւն, Քրիստոնէութիւն, ազգասիրութիւն եւ անձնասիրութիւն, ժողովրդավարութիւն, քաղաքացիական գիտակցութիւն, օրէնքի գերակայութիւն, բարձր տեսլականի առաջնորդութիւն, մօտաւոր եւ հեռավոր նպատակային ծրագրաւորում:

Դատելով վերելի ենթախորագիրներէն, ընթերցողը կրնայ եզրակացնել, որ շեշտը աւելի «ներքին»ի վրայ է, քան՝ «արտաքին»ի: Հոն կը գրէինք. «Մեր նպատակը, եղեռնի 96-ամեակի նշման այս օրերուն, մեր ընթերցողները մղել է, որ սովորական դարձած ու յաճախակիօրէն կրկնուող «քլիշէ» մտքերէն անդին անցնին եւ Զարդի վրայ կեդրոնանալէն անդին, մտածեն մեր վտանգուած գոյերթը ամրակայելու մասին: Մանաւանդ երբ մեր աչքին առջեւ Հայաստանը ահագանգային թափով կը դատարկուի իր բնակիչներէն եւ Սփիւռքն ալ նոյնքան ահագնօրէն կ'ալլասերի ու կը հիւժի: Այս պէտք է ըլլայ մեր առաջնահերթ մտահոգութիւնը եւ անոր դարմաններ որոնելու աշխատանքը:» Որպէս դարմանի միջոց, կ'առաջարկէինք կարդալ Պատմահայր Խորենացիի «Ողբ»ը, «ուր մի առ մի նշուած է թէ մեր հասարակութեան ամէն մէկ անհատը ի՞նչպիսի վարքագիծ պէտք է որդեգրէ, բարձրանալու եւ իր հետ բարձրացնելու համար հայ ազգը իր ողբալիլի լիճակէն»: Կը նշէինք նաեւ Մա-

հաթմա Կանտիլի մէկ խօսքը, որ անհատ քաղաքացիներու ներքին անկախութեան ձգտումն ու տիրացումը, նախապայման է երկրի մը արտաքին անկախութեան նուաճման: Բնականաբար կ'անդրադառնայինք նաեւ Չարենցեան պատգամին. «Խորենացիի խրատներէն մինչեւ Չարենցեան պատգամը այլեւս պէտք չէ իջնան խուլ ականջներու վրայ, այլ պէտք է շեփորուին բարձրադասակ ու քանդակուին ամէն մէկ հայի գիտակցութեան մէջ: Եթէ անշուշտ կ'ուզենք կասեցնել մեր գահավէժ ընթացքը եւ բեկումնային շրջադարձ մը իրագործել:»

Ինչպէս կը տեսնէք, շեշտը միշտ ալ «ներքին»ը ամրացնելու վրայ է, որովհետեւ այդ է հիմքը արտաքին յաջողութեանց հասնելու: Միլիա Կապուտիկեանի դիտմունքով, Վան հասնելու ճամբան կը սկսի հօր Երեւանէն: Բնականաբար, սաղանդաշատ բանաստեղծուհիին նկատողութիւնը նորութիւն մը չէր, որովհետեւ իրմէ առաջ ալ մեր այլ մեծեր նոյնպիսի խրատներ տուած են: Մեր յօդուածներուն մէջ մենք տեղ տուած ենք Ռաֆֆիի ինքնաճանաչութեան յորդորներուն, Թումանեանի «մենք ներսից ենք փչացած» ախտաճանաչման եւ կամ Կոմիտասի գանգատներուն՝ արժանաւոր մարդիկը պաշտօնի չկոչելու ցաւին: Բերած ենք նաեւ օրինակներ հինգերորդ դարի մեր մեծերու յորդորներէն եւ Նուարսակի դաշնագրի պայմաններէն: Նշած ենք նաեւ, որ մեր Արշակունեաց թագաւորութեան վերջին ութը թագաւորներէն վեցն ընկալուած իշխանութիւնը, գոհ երթալով ներքին դաւադրութեանց:

Համոզուեցա՞ք, որ երբ ներքին ճակատի վրայ երկփեղկուած ենք ու անհամերաշխ, բնականաբար խոցելի կը դառնանք ու կը շահագործուինք արտաքին ուժերու կողմէ: Ուրեմն ինչո՞ւ թերացած ենք այս անհրաժեշտ գործին մէջ՝ հաւաքական աշխատանքով հետապնդելու մեր ազգային գերագոյն շահերը: 1910-ին հրատարակած իր «Հայը եւ իր ճամբան. Քաղաքականութիւնը եւ մենք» յօդուածին մէջ, Թումանեան կը գրէր. «Միշտ առաջնորդուած ենք քամու հոսանքներով, նախապաշարուածներով ու թիրիմացութիւններով, ամէն անգամ էլ դառնութեամբ հաշուելով մեր կոպիտ սխալներն ու կորուստները, ամէն անգամ էլ ամէն մէկս ետին թուով հանդիսանալով խելօք ու հեռատես, երբ եղածն անցել է անդառնալի:» Ու կը յանձնարարէր, որ «Առաջին ու մեծ տեղը պէտք է բռնեն մեր աշխարհքը, մեր կեանքը, այդ կեանքի հարցերն ու նրանց լուրջ, ամենակողմանի ուսումնասիրութիւնը:»

Շատ լաւ գիտակցելով, որ աշխարհը միշտ ալ փոփոխութիւններու ենթակայ եղած է ու պիտի շարունակէ ըլլալ, կայսրութիւններու ու մեծ պետութեանց անկումով եւ նորերու երեւումով, Թումանեան մեր նշած յօդուածին մէջ կը գրէր. «Ժողովուրդները ապրում են քաղաքական մեծ պայքարներով, երկիրներ ու ազգեր տիրելու եւ կառավարելու ծրագիրներ ունեն, առեւտուրի մեծ շուկաներ ու ազդեցութիւնների սապարէզներ ձեռք բերելու խնդիրներ ունեն, միլիարդներով փոխառութիւն անե-

լու, դաշնակցութիւններ կապելու հոգսեր ունեն, խաղում են իրենց ահռելի ուժերով, աշխարհքներ ու ազգեր են շարժում, եւ արթուն, ուշի՛ ուշով հետեւում են ամէն մէկը միւսի կամ ամբողջ աշխարհքի քաղաքական կեանքի ընթացքին, մանրամասն հաշուի են առնում դիմացինի այս կամ այն շարժումը, նաւերի թիւն ու զօրաբանակը, աշխատում են գուշակել մէկը միւսի տեսակցութիւնն ու խօսակցութիւնը, զբաղում են դրանով, խորհրդածութիւններ են անում, եւ այդ պատճառով իրենց թերթերն ու յօդուածներն էլ նուիրում են դրանց:» Իսկ մենք, այդ բոլորին ի տես, ի՞նչ ծրագիրներ կը մշակենք, ապահով հիմերու վրայ դնելու համար մեր գոյերթը եւ ոտնատակ չերթալու համաշխարհային պայքարներու թատերաբեմին վրայ: Ընդունուած իրականութիւն է, որ դարերու ընթացքին Հայաստանը միշտ ալ կուռախնձոր դարձած է մեծերու մրցակցութեան, Արեւելք-Արեւմուտք եւ կամ Հիւսիս-Հարաւ պայքարին: Ինչո՞ւ չենք յաջողած մեր ժողովուրդի մտայնութեան մէջ հիմնաւորել այդ մրցակցութիւնն ու պայքարէն լաւագոյնս օգտուելու եւ կամ նուազագոյն վնասով դուրս գալու կենցաղային մշակուցից: Մշակուցի մը, որ բնականաբար զարկ պիտի տար անհատական յաջողութիւնները նաեւ ծառայեցնելու ազգային շահին: Ընդհակառակը, մեր մէջ միշտ ալ գերիշխող եղած է եսասիրութիւնը, որուն պատճառաւ հետամուտ եղած ենք մեր անձնական եւ կամ հատուածական շահին, նոյնիսկ ի վնաս ազգայինին:

Այսօրուան մեր աշխարհացրիւ մեծահարուստները որքանո՞վ տարբեր կը շարժին Եղեռնի նախօրեակին Պաքուի, Թիֆլիսի եւ կամ Պոլսոյ մեր մեծահարուստներէն: Անոնց հարստութիւններէն ի՞նչ մնաց ազգին: Մէկ գիշերուան մէջ, Ապրիլ 23-24-ին արտաքին թշնամին ձեռքալալեց եւ մահուան առաջնորդեց աւելի քան 600 հայ

աւագանիներ: Սկիզբ առաւ Եղեռնը, մեր պատմութեան մեծագոյն դժբախտութիւնը, որուն հետեւանքները տակաւին կը կրենք: Դաս քաղեցի՞րք ատկէ: Կը կասկածինք: Որովհետեւ եթէ քաղած ըլլայինք, հայու ձեռքով պիտի չզլխատէինք մեր պետական աւագանին 27 Հոկտեմբեր 1999-ին: Որքանո՞վ տարբեր էր այդ քստմնելի արարքը 374 թուին Պապ թագաւորի եւ կամ 1727 թուին Մխիթար Սպարապետի դաւադրաբար սպանութիւններէն: Իրաւունք չունի՞ Թումանեան, երբ կ'ըսէր, որ «մենք ներսից ենք փչացած»: Հարիւրամեակ մը անցած է այդ խօսքէն: Ի՞նչ փոխուած է:

**AEBU SCHOLARSHIP PROGRAM**

**APPLICATIONS NOW OPEN**  
Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**



EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

626•344•7321

**AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel:-----  
Email:-----



# Անցեալի Գոգեմորմոք Յիշատակում... Հրաշքով փրկուած նորածին մանուկը

## Ռ. ԿՈՐԻԻՆԻ

Ցաւի, հառաչանքի Ապրիլեան օրեր,  
Կոտորածի եւ տառապանքի  
Սեւ քօղով պատած 1915,  
Պատմութիւնը մեր այդ ողբալի,  
108 տարիների յորձանուտում

Դատը մեր մնում է անլոյծ:  
Ցաւ եւ կսկիծ սրտեր Հայու-  
թեան,  
Անմահ նահատակների կանչը  
անկատար,  
Արդարութիւն... արդարութիւն  
ի լուր արողաց  
Պահանջն է մեր նահատակաց:

Ապրիլեան, 1915 ողբերգական թուականի, ոգեկոչման 108 ամեակն ենք յիշատակում: Անցած տարիներ, սակայն աշխատանքի, պայքարի տարիներ: Աղետեալ մեր ժողովուրդը կազմակերպեց իր կեանքը տարբեր գաղթօճակներում: Հայ ոգով սերունդներ աճեցին եւ բազմացան շնորհիւ աւանդական կուսակցութիւնների ջանքերով, նաեւ աշխարհին ճանաչեցնելով հայ ժողովրդի նկատմամբ կատարուած ջարդն ու կոտորածը, ցեղասպանութիւնը:

Մեր դատը անժամանցելի է, տարուհ-տարի աւելի թափ է ստանում նոր երկրների պաշտօնապէս ճանաչումով եւ գորակցութեամբ, որոնք յորդորում են թուրքիային առերեսուի իրականութեան հետ: Թուրքիան ժխտողական դիրքում, ցեղասպանութիւնը հորինված պատմութիւն է համարում: Այսօրն ասն էլ բոլոր աշխարհի երեսուն մէկ երկրները, որոնք պետականորէն հսկայական փաստերի հիման վրայ ցեղասպանութիւնը քննարկել, ճանաչել եւ հաստատել են, կատարուել է առանց տեղեակ լինելու պատմութեան ճշմարտացիութեան եւ վաւերացրել են: Ո՛չ, թուրք իշխանաւորներ, դուք շարունակ կեղծում էք, ինքնապաշտպանութեան անհիմն փաստարկներով ձեզ արդարացնելու համար: Թող թուրքիոյ իշխանաւորները լաւ իմանան, որ որքան իրենք հակառակ են, ճշմարտութիւնը ինքնապաշտպանութեան անհիմն փաստարկներով ձեզ արդարացնելու համար: Թող թուրքիոյ իշխանաւորները լաւ իմանան, որ որքան իրենք հակառակ են, ճշմարտութիւնը ինքնապաշտպանութեան անհիմն փաստարկներով ձեզ արդարացնելու համար: Թող թուրքիոյ իշխանաւորները լաւ իմանան, որ որքան իրենք հակառակ են, ճշմարտութիւնը ինքնապաշտպանութեան անհիմն փաստարկներով ձեզ արդարացնելու համար:

Դեռ անդադրում ու անկոտորում ողջ հայութիւնը միատեղ շարունակելու է պահանջատիրութիւնը մեր մէկ ու կէս միլիոնից աւելի անմեղ զոհերի յիշատակը առձայն պահելու եւ հետապնդելու, որպէսզի նոր երկրներ միանան դատարարութեան: Ինչպէս կարելի է մոռանալ մի ողջ ազգի ցեղասպանութիւնն ու հայրենայ զրկումը, որն անկարելիութիւններից է, քանի հայը կայ եւ ապրում է, իր դատն էլ ապրում է հետեողականորէն մինչեւ արդարութեան վերականգնում, չեմ կարծում այլ տեսակ մտածում որեւէ հայի մտքից անցնի:

Հայոց կոտորածներից հրաշքով փրկուած ծնողագուրկ մանուկներ եղել են անհամար, որոնցից հազարներով թուրք իշխանաւորները հաւաքագրել եւ պա-

հել են յատուկ նպատակների համար, իսկ մեր եւ այլոց որոշ որբախմամ կազմակերպութիւններ հազարաւոր որբերի նկատմամբ սրտցաւ հոգատարութիւն են ցուցաբերել, որոնցից շատերն շանաւոր մարդիկ դառնալով ծառայել են իրենց ծնող ժողովրդին տարբեր ասպարէզներում:

Այս մէկի մասին, որ գրում եմ, բացառիկ դէպքի հետեւանք է եղել: Ինչպէս, Մոլորակե շաբաթաթերթի 1139 համարով է ներկայացուած Արմինէ Արդութեանի գրչով, այդ սահմուկեցուցիչ ջարդի տարին մի գաղթական խումբ շտապ դէպքի արեւելեան Հայաստան փախուստի ճամբին է լինում, որին հեռուից հետեւում էր թուրք ճիւղերի մի հալածիչ խումբ, որպէսզի փախչող խմբի մարդկանց կոտորեն: Այդ խմբի մէջ է լինում մի երիտասարդ յղի կին, որը այդ ընթացքում ծննդաբերում է իր աղջնակ երեխային, նրան արագ բարուրում եւ արագացնում են իրենց ընթացքը նրանց որոգայթը չընկենելու համար, սակայն այդ միջոցին հասնում են թուրքերը, փախստականները ճար ու ճամբայ չեն ունենում աս ու սարսափի մէջ, անսպասելիօրէն երիտասարդ կինը գերբնական ինչ ուժերից մղուելով բարուրուած երեխային տանում եւ դնում է ճիւղերի առաջը եւ ինք մի կողմ է քաշուած աղօթքը շուրթերին: Ով գիտէ թուրքերը զգալով որ յոգնած են եւ կամ մտածելով թէ խումբը ամենայն հաւանականութեամբ քարքարոտ սար ու ձոր ճամբէքում քայլելով առանց սնունդի ողջ չեն մնայ, ուստի առանց ձեռք տալու նրանց թողնում եւ հեռանում են: Ահաւասիկ սրան ասում են հրաշք, զինուած թուրքը հային ազատ է թողնում իրենց ճակատագրին չանձնելով: Կարելի է ենթադրել, որ նրանցից մէկնում է կի խղճմտանքի գուլթն արթնանում եւ յորդորում է միւսներին ձեռնպահ լքել:

Այո՛, ամէն ինչ կարելի է, ուստի շատ էլ յոռետես պէտք չէ լինել, քանի որ այդ կորորածները ընթացքում գտնուել են բարեխիղճ գթառատ մարդիկ, որոնք գաղտնի հայեր են փրկել:

Այդ մագապուրծ խումբը մեծ դժուարութիւններով փրկուած է բնակութիւն հաստատելով Հայաստանում: Ըստ յօդուածագրին՝ Այդ աղջիկը մեծացաւ, ստեղծեց ընտանիք, դաստիարակեց հինգ զաւակներ: Որդիներից մէկն էլ դարձաւ այն մարդը, ով պահպանեց հրաշքների հանդէպ ընտանեկան հավատը:

Այդ հրաշք տղան Հրաչիա Արոյեանն է, ստեղծագործող վարպետ՝ «Աւանդական արուեստների եւ փառատոնների միջազգային կազմակերպութեան անդամ»: Նա իր ծննդավայրի միջազգային կազմակերպութեան անդամ է՝ Գեղարուեստական ծեփագործութիւն: տաղանդաւոր վարպետի մասին առաւել տեղեկութիւններ գրութիւնը կարդալ:

Այս տարուայ ապրիլեան ոգեկոչման տարեկիցը նոյնպէս նախկին տարիների պէս առաւել շարքերը խտացրած, մէկ կամք ու ոգի դարձած առաջ կը տարուի ցեղասպանութեան դատարարումն եւ հատուցմ ան պահանջատիրութիւնը:

# Պատարագ ԱԼԱ ՄՈՒՇԳԱՄԲԱՐԵԱՆ

Նիրհի մէջ կաշկանդուած էր անվերջանալի, անշարժ հարթութիւնը: Ծուրջը՝ մղկտացնող տիրութիւն, անեզր տարածք, որ հայեացքի առջեւ կարմիր ամպերի տակից բացուած, դառնում էր հարթավայր: Ծէկ գոյնի համատարած թագաւորութիւնն իր մէջ էր առել երկինք ու երկինք: Գնում էր քարաւանը այս ու այն կողմ ճօճուելով, չկարողանալով կարծես յենման կէտ գտնել, գնում էր ճօճուելով... դատարարութեան հաշտուածութեամբ:

Գնում էր նա հայոց պատմութիւն դարձած՝ Տէր Զօրի անսպասաներով դէպք... Գողգոթա...

Իրիկնացաւ: Քարաւանը կանգ առնելու հրաման ստացաւ: Մարդիկ կտորատուած ճիւղերի նման փռուեցին աւազներին բացի ալեզարդ մի վանականից, որը պտտուած էր քարաւանի մէջ մրմնջալով իր իրիկնային աղօթքը:

Հայք  
Հրեշտակ պահապան  
պահա անսասան  
միմչել առաւօտեան...

Պատառոտուած փարաջայի տակից երեւում էին առնական կուծքն ու բազուկները: Աչքերը յառած անծայրածիր հարթութեանը նա կրծքին էր սեղմել հնամաշ Աւետարանը՝ դարերի խորքից բերուած խօսքերով, որոնք էլ հենց բանն էին, Աստուծոյ ծանր հայեացք, որ հետեւում էր ամէն մի շարժմանը եւ յաւերժական վէճ Ամենաբարձրելի հետ, որին հարկաւոր էր ենթարկուել, բայց որի դէմ թուում էր թէ ընդվզել էր ուզում: Աչքերի մէջ մոռալ զսպուածութիւն էր, զսպուածութիւն, որ ծնել էր հզոր բնակութիւն, բայց ճնշել, հոգու զաղտնարաններում թաքցրել էր ալկոծ այնպիսի հարցեր, որ մի օր էլ պոռթկալով ունակ էին փոթորիկ բարձրացնել: Մշուն այդ,

որում կարծես մերուել էր շրջապատը, դրդում էր նրան կեդրոնանալ ինքնիր մէջ, իր հոգու ցաւին...

Ինքը յուսոյ խօսքերով կը տանի ՆՐԱՆՅ...

Գիշրուեայ ամպերը կամաց-կամաց երանգաւորուած էին ազդարբելով այգաբայրը:

Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեալ...

Երգում էր վանականը այնպէս գեղեցիկ, ձայնի այնպիսի սքանչելիութեամբ, որ նոյնիսկ զազան յուզբաշին, որ մի խոր ատելութիւն ունէր դէպի «գեաւուրները», ահանջները սրած աշխատում էր բաց չթողնել ոչ մի ելեւէջ, ոչ մի թրթիւն:

Անսպասի քարացած անծայրածիր հարթութեան մէջ, այգաբայրի շողերի ներքոյ ալեզարդ վանականը ձեռքերը կրծքին՝ մի վեհ եւ խորհրդաւոր տպաւորութիւն էր թողնում:


Առաւօտ լուսոյ, Արեգակն արդար...

Հագիւ էին լռել երգի ելեւէջները, երբ յանկարծ լուսեց ահռելի մի ճիչ...


Սկսուեց... դժոխային սպանդը... Կտրուած ծառի նման ծնկեց վանականը աւազներից...

Անսպասել լցուել էր ահռելի ճիչ ու վայնասունով... Հրելով երեխաներին դէպի իրենց թիկունքը, մայրերն առաջինն էին ընդունում եաթաղանի հարուածները: Գազազած ասկեարները քաշում, հանում էին կանանց փէշերի տակ թաքնուած փոքրիկներին եւ յօշօտելով՝ ոռնում հաճոյքից... Խեղազարուած մի ծերունի փորձում էր թոռանը թաքնել աւազների տակ... Յնորում մի մայր սարսուցնող քրքիջով ծոցն էր խցկում անզլուխ

Շար.ը էջ 19



ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION  
ՀԲԸ Միութեան Լոս Անճելոսի  
Վեթերաններու Վարչութիւն  
LOS ANGELES VETERANS COMMITTEE



**Հոգեհանգիստ եւ Ոգեկոչում  
Ողբացեալ  
Ժիրայր Դանիէլեանի  
Յիշատակին**

**Հովանաւորութեամբ՝  
Թեմիս Բարեջան Առաջնորդ  
Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի**

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ  
ԿԻՐԱԿԻ, 30 ԱՊՐԻԼ 2023-ԻՆ  
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ,  
2215 E COLORADO BLVD. PASADENA, CA 91107

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԷՆ ԵՏՔ  
ՀՈԳԵՃԱՇ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ  
ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՊՅԱՄՃԵԱՆ ՍՐԱՀԷՆ ՆԵՐՍ  
2495 E MOUNTAIN STREET, PASADENA CA 91104

ԲԱՆԱԽՕՍ ԻՐԱՒԱԲԱՆ՝  
ՌՈՒԲԷՆ ԱՒՇԱՐԵԱՆ  
ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ  
RSVP ՀԲԸ-Ի ԳՐԱՍԵՆՏԱԿ (626) 794-7942



### ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի եւ Պատուիրակութեան Պաշտօնական Այցը Գարն



Նախորդ շաբաթ ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. պատուիրակութիւնը այցելութիւն ունեցան Ճաբոն՝ Լոս Անճելըսի մէջ Ճաբոնի նախկին գլխաւոր հիւպատոսի հրաւերով: Նախորդ տարի լրացաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Ճաբոնի միջեւ դիւանագիտական ներկայացուցչութիւններու հաստատման 30-ամեակը:

Լոս Անճելըսի մէջ Ճաբոնի նախկին գլխաւոր հիւպատոս Ակիրա Մուտոյի հրաւերով Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը եւ պատուիրակութիւնը Մարտի 12-17-ը պաշտօնական այցով գտնուեցան Ճաբոն: Սրբազան Հօրն կ'ուղեկցէին Թեմական խորհրդի ատե-

ներով: Էյչիին մեծապէս աջակցած է հայերին Հայոց Յեղասպանութեան ժամանակ: Որպէս Առաջին աշխարհամարտի տարիներուն Ճաբոնի Հայ Օգնութեան կոմիտէի նախագահ՝ էյչիի Շիբուսավան շարք մը նուիրատուութիւններ, միջոցառումներ եւ դասախօսութիւններ ունեցած է զանազան խումբերու հետ, որոնք ջանք չխնայեցին կարիքաւոր հայերուն միջոցներ հայթայթելու համար:

Ան եղած է «Արմենիա-Նիպոն» հայ-ճաբոնական գիտամշակութային միութեան ղեկավարը:

Այս հանդիպումին յաջորդեց այցը Շիբուսավանի յիշատակի թանգարան, ուր ցուցադրուեցան փաստաթղթեր եւ ցուցանմուշներ Շիբուսավան էյչիի կեանքին:



նապետ Տիրար Դերիկ Ղուկասեանը տրիկոն՝ Ատրինէի հետ, Կլենտէյլի քաղաքապետարանի պաշտօնեայ Տիրար Ռուբիլ Գալոյեանը, «Հայաստան» հիմնադրամի նախագահ Մարիա Մեհրանեանն ամուսնուն՝ Արմէն Խաչատրեանի հետ, Արեւմտեան Թեմի գործադիր տնօրէն Յարութ Մարգարեանը:

Արեւմտեան Թեմի եւ Ճաբոնի գլխաւոր հիւպատոսութեան միջեւ համագործակցութիւնը սկսած է եւ ամրապնդուած է գլխաւոր հիւպատոս Ակիրա Մուտոյի դիւանագիտական ծառայութեան ընթացքին՝ 2019 - 2022 թթ.: Շարք մը հանդիպումներ տեղի ունեցած են նաեւ Լոս Անճելըսի մէջ Ճաբոնի նորանշանակ գլխաւոր հիւպատոս Կենկո Մոնէի հետ, որ իր պաշտօնը ստանձնեց 2022 թ. Սեպտեմբերին:

Մարտի 14-ին Առաջնորդ Սրբազանն ու պատուիրակութեան անդամները հանդիպեցան Մասահիդէ Շիբուսավանի՝ Շիբուսավան էյչիի ծոռան: Վերջինս ազդեցիկ դերակատարութիւն ունեցած է Ճաբոնի արդի զարգացման գործին մէջ՝ դիւանագիտական, ձեռնարկատիրական, հասարակական առում-

Կէսօրին Յովնան Արք. պատուիրակութիւնը հանդիպեցաւ Ճաբոնի Հայաստանի Հանրապետութեան ղեկավար Տիրար Արեգ Յովհաննիսեանին: Յարգելի հիւրերուն ջերմ ողջոյն փոխանցելէ յետոյ ղեկավար Յովհաննիսեանը պատուիրակութեան անդամներուն ներկայացուց Ճաբոնի եւ Հայաստանի միջեւ երկկողմ դիւանագիտութեան յարաբերութիւններու պատմութիւնը, ինչպէս նաեւ երկու երկրներու միջեւ ընթացիկ եւ ապագայ համատեղ առաքելութիւնները:

Մարտի 15-ին, մշակութային ժառանգութեան հարցերով միջազգային համագործակցութեան գրասենեակի տնօրէն Կոհէյ Օկավայի ուղեկցութեամբ, Առաջնորդ Սրբազանը եւ պատուիրակութիւնը հանդիպեցան Արուեստի եւ տարածաշրջանային դիզայնի ֆակուլտետի Սագայի համալսարանի թանգարաններու պահպանութեան ուսումնասիրութիւններու ղոցենտ Մի իշիին: Յովնան Արք. Տէրտէրեանը իր երախտագիտութիւնը յայտնեց Մի իշիին, որ գլխաւորած է

### Վեր. Պարգել Ն. Տարագճեանի Յիշատակին

«Ջուրը կ'եռայ,- Հեռախօսէն կը լսուի անոր ազդու ձայնը,- Ձեզ կը սպասենք»:

Կապը, որ զարգացեր էր հեռակայ կարգով, տեղափոխուեր էր Գալիֆորնիայի Կլենտէյլ քաղաքի թաղամասը: Որպէս հարեւաններ՝ ես եւ Սոնան երկար ժամանակ կը վայելէինք Պատուելի Պարգելի եւ Արմինէի ընկերութիւնը, իսկ անոր ցաւալի մահէն յետոյ՝ Պատուելիի եւ Ակնէսի: Հարաւայիտ Գալիֆորնիան օրհնուեցաւ ժամանակակից պատմութեան մէջ ամենայայտնի հայ աւետարանական մտաւորականներէն մէկուն ներկայութեամբ: Պատուելի Պարգել Տարագճեանը հեռատեսէր, ներդրով իր, օժտուած ճանաչողական գանձերով, ընկերային հմտութիւններով, հաճոյախօսութեան զգացումով եւ անքննելի հաւատքով:

Ան իր կոչումին ուշ սկսաւ, բայց պատանեկութեան տարիներուն ժամանակ չխնայեց ինքնազարգացման համար, այնքան, որ երեսուն տարեկանին գոլէճ ընդունուելու ատեն, Պարգել Տարագճեանը հանրագիտարանային գիտելիքներ ձեռք բերած էր հայոց պատմութեան, գրականութեան եւ Աստուածաբանութեան մէջ: 20-րդ դարու երկրորդ կէսին մեծցած Մերձաւոր Արեւելքի հայ երիտասարդութեան սերունդները Պատուելի Պարգելին հանդիպեցան Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան պաշտօնական հրատարակութիւններ՝ «Պատանեկան Արձագանգ»-ի եւ «Ձանասէր»-ի էջերուն:

Ան խրախուսեց եւ ոգեշնչեց զանոնք գրելու՝ հնարաւորութիւն ընձեռելով շատերուն, երեւելու համար հրատարակութիւններու էջերուն: Պատուելի Պարգել ունէր խոր եւ հարուստ ձայն, որով ան շուայլօրէն կը հռչակէր հաւատքը եւ կը գովերգէր արժանապատիւ ազգային ինքնութիւնը: Ան լաւագոյնս ըմբռնեց իր հայ աւետարանական արմատներն ու ինքնութիւնը եւ մեծահոգաբար լուսաբանեց զանոնք իր գրութիւններուն մէջ: Անոր «Հայ Աւետարանական Ինքնութիւն», «Անփոխարինելի ժառանգութիւն» եւ այլ գիրքերը դասագրքային չափորոշիչներ են, որոնք պէտք է ըլլան ուսումնական ծրագրի մէկ մասը բոլոր անոնց համար, որոնք կը ձգտին ներդրում ունենալ Տիրոջ ծառայութեան մէջ:

Տասնամեակներ շարունակ Պատուելի Պարգելի «համախոհները» այն երիտասարդներն էին, որոնք այնքան շատ կը սիրէին գինք, որ պակեցին գինք «Շէֆ» (Chief) կոչումով: Պատուելի Պարգել առատօրէն իր գիտելիքները բաժնեց ուրիշներուն: Ըլլայ եկեղեցիներու ամպիոններէն, թէ դասախօսութիւններու սրահներէն, ան կը թեց, խոկաց եւ լուսաւորեց շատերուն Պէյրութի, Շիբապոյի, թէ Լոս Անճելըսի մէջ: Չնայած հայ աւետարանական պատկանելիութեան, իր խորթափանց զգացումին, Ան հովիւ էր բոլորին:

Անոր ծառայութիւնը Շիբա-



կոյի Հայ Աւետարանական եկեղեցիին մէջ, ոսկեդար էր այն համայնքին համար, ուր գինք կը փնտռէին դասաւանդելու, քարոզելու, դասախօսելու եւ ղեկավարելու համար: Չնայած իր մտաւոր կարողութիւններուն, Պատուելի Պարգել ժողովրդական մարդ էր: Ան կը սիրէր ընկերակցութիւնը, հաց կը կտրէր կ'երգէր, կ'ուրախանար, թղթախաղ կը խաղար: Ըլլալով աւետարանիչի որդի՝ անոր այդ ոգին դրսեւորուեցաւ Տարագճեան թոռան մէջ, որ ծառայութիւն կը բերէ Տիրոջ Քրիստոնէական անդամանին մէջ:

Պատուելի Պարգել Տարագճեան 20-րդ դարու երկրորդ կիսուն հայ աւետարանականներու բաբախող սիրտն ու ղոցանջող խիղճն էր: Բնութագրեր եւ համոզմունքներ, որոնք օրէջօր կը նօսարանան:

Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան անունով մեր սրտագին ցաւակցութիւնները կը յայտնենք իր կողակցին՝ Ակնէս Անդրեասեան Տարագճեանին, դուտրերուն՝ Անիին եւ Հուրիին, անոնց ընտանիքներուն եւ Փենայի Աւետարանականի նախագահ Դոկտ. Տարագճեանին:

Թող մեր Տէր Աստուածն իր առատ շնորհով մխիթարէ Տարագճեան ընտանիքի իւրաքանչիւր անդամ, եւ թող իր ժառանգութիւնը շարունակուի օրինակ ծառայել հայ երիտասարդութեան ներկայ սերունդներուն:

Յ.Գ. Վեր. Պարգել Ն. Տարագճեան այս աշխարհէն հեռացաւ Հինգշաբթի, Մարտ 6, 2023-ին Կլենտէյլի մէջ՝ Գալիֆորնիա: Վերապատուելիին Յիշատակի պաշտամունքը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 4, 2023-ին՝ առաւօտեան ժամը 10-30ին, Լոս Անճելըսի Միացեալ Հայ Ժողովական Եկեղեցիին մէջ՝ որուն պիտի յաջորդէ Յիշատակի ծառ մը՝ Եկեղեցիի Աւագեան Սրահին մէջ: Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները պիտի յատկացուին Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան (AMAA) Պարգել Տարագճեան Յիշատակի հիմնադրամին - 31 West Century Road, Paramus, NJ 07652:

ԶԱԻԷՆ ԽԱՆՏԵԱՆ, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան Գործադիր Տնօրէն

Ձեր Ծանուցումները Կստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680



### Մարտիկի Սահակ-Մեսրոպ Երզնասունցի Զօրեկանը



Ապրիլի 28ին, յատկանշական յօբելեան մը պիտի նշուի որ փարեւոր իրադրութիւն մըն է համահայկական բնոյթով: Այսպէս Ֆրանսայի հայաշատ շրջաններէն Մարտիկ քաղաքի պատմական սրբավայրերէն Սուրբ Վիգթորի աբբայարանին մէջ, Սահակ-Մեսրոպ Երզնասունցի հանդէս պիտի գայ իր հիմնադրութեան 45-ամեակին նուիրուած տօնական համերգով մը:

Սոյն յօբելինական համերգի երգչախումբը խմբավարն է Գա-

րիկ Քիւրքճեան: Ներկայիս, Սահակ-Մեսրոպ Երզնասունցի իր առաքելութիւնը կը շարունակէ, միշտ վառ պահելով նախկին խմբավար պոլսահայ ինչպէս Երզնասունցի ձգած աւանդը:

Վերոյիշեալ համերգի ընթացքին Սահակ-Մեսրոպ Երզնասունցիին առընթեր յայտագրին մաս պիտի կազմեն «Ազատ» եւ «Սասուն» համոյթները (գեղարուեստական ղեկավար՝ Միշէլ Վէմեան), ինչպէս նաեւ «Գերամ» համոյթը (ղեկավար՝ Սարգիս Էօրտէքեան):

### Նորաստեղծ Միութիւն Սը Պոլսոյ Սէջ



Մեր պաշտօնակից «Ժամանակ» թերթէն կ'իմանանք որ Գումգաբուրի «Պէգճեան» սրահին մէջ անցեալ շաբաթավերջին տեղի ունեցած է «Մեր Հայեր» նորաստեղծ միութեան ծանօթացման ընդունելութիւնը: Ինչպէս ծանօթ է «Մեր Հայեր»-ը համավարակի շրջանին ստեղծուեցաւ, որպէս ընկրային օժանդակ շարժում: Յաջորդած շրջանին կազմակերպութիւնը զարգացաւ եւ այսօր արդէն ստացած է նոր միութեան մը դիմագիծը:

Այս միջոցառումին ողջունի խօսքերով հանդէս եկան Ռոպերթա Չիրիշեան եւ Յովհաննէս Եանկը: Անոնք յայտնեցին որ Միութիւնը հաւաքուած է յարկաբաժինի մը

երդիքին տակ, որուն սեփականատէրը նախընտրած է իր անունի չի հրապարակուիլը: Ելոյթ մըն ալ ունեցած է միութեան ատենապետ Արեւ ձէպէճին: Ան զանազան անձնաւորութիւններէ ստացուած պատգամները կարգալէ ետք, բեմ հրաւիրեց միութեան հիմնադիրները, որոնց յանձնուեցան յուշանուէրներ: ձէպէճին տեղեկացուց որ միութեան պատուոյ ատենապետն է մեր համայնքէն Եթ քին Պէրպէրօղլուն:

Ամեն, Պատրիարք Հայրն ալ արտասանեց հուսկ բանքը, որուն ընթացքին ողջունելի նկատեց «Մեր Հայեր»-ու այս նոր պաշտօնական կառուցի ձեւաչափով հանրութեան ներկայանալը:

### Արարկի Քաղաքապետը Այցելեց Հայ Եղբայրներուն

Տակաւին կան հայեր, որոնք կը շարունակեն ապրիլ Մալթիոյ Արաբկիր շրջանին մէջ: Անոնցմէ են Միքայէլ եւ Սարգիս եղբայրները: Արաբկիրի քաղաքապետ Հալուք ձէօմերթօղլու Սուրբ գատկուան տօնին առթիւ, պատիւ մը շնորհած է իր հայ հայրենակիցներուն եւ այցելեց անոնց, անձամբ շնորհակարարութիւն համար կրօնական տօնին առիթով: Քաղաքապետը յուշանուէրներ յանձնեց արաբկիրցի հայ եղբայրներուն: Ան ըսաւ որ հասարակաց զգացումներով կ'ապրին ուրախութիւնն ու վիշտը, հակառակ որք են կրօնական պատկանլիութիւնն ու աւանդութիւնները: Աւարտին խաղաղութիւն եւ անդորրութիւնը մաղթեց Թուրքիոյ հանրապետութեան եւ բնակիչներուն:

«Մարմարա»

### «Data Awards»-ը Հայ Հիմնադիրներ Ունեցող «DISQO»-ն Գնահատուած է 2023-ի Տուեալներու Հետազոտութեան Լաւագոյն Լուծումը



«Data Awards»-ը հայ հիմնադիրներ ունեցող «DISQO» ընկերութիւնը գնահատուած է տարուայ լաւագոյն տուեալներու հետազոտութեան լուծում: «DISQO-ի CX» հարթակը ճանչցուած է աշխարհի լաւագոյնը՝ իւրաքանչիւր յաճախորդի համար սպառողներու վերաբերմունքին եւ վարքագծին վերաբերեալ խորացած վերլուծութիւններ առաջարկելու

համար: Ընկերութեան՝ ամպային արհեստագիտութեան վրայ հիմնուած չափման եւ շուկայի հետազոտութեան գործիքակազմն ու «API» ծրագրերը սպառողական վերլուծութիւններ կը տրամադրեն խոշորագոյն հետազոտական ընկերութիւններու, յառաջատար գովազդային գործակալութիւններու ու լրատուական հարթակներու:



### «Մարալ» Երգի Պարի Համոյթի Փառապանծ Ելոյթը

Ամիսներէ ի վեր մեծ պատրաստութեամբ սպասուող հասցեան սանուց միութեան «Մարալ» երգի-պարի համոյթը իր ելոյթն ունեցաւ Պոլսոյ «Ֆուլիա» գեղարուեստասրահին մէջ: «Ժամանակ» թերթին համաձայն բառին բուն իմաստով փառապանծ ելոյթ մըն էր այս մէկը, որուն մասնակիցներն ունեցան անմոռանալի տպաւորութիւններ:

Երկրաշարժի աղիտեալներուն ի նպաստ կազմակերպուած ձեռնարկին ներկայ էին նաեւ Թուրքիոյ Հայոց պատրիարք Սահակ Արք. Մաշալեան եւ այլ կարեւոր անձնաւորութիւններ: Գեղարուեստական ղեկավար Կարպիս Չափքանի հսկողութեան ներքեւ պարողները արձանագրեցին

իրենց հերթական փայլուն յաջողութիւնները: Անոնք իրենց պարերով, տարազներով իսկապէս խոր տպաւորութիւն մը գործեցին հանդիսատեսին վրայ, արժանանալով որոտընդոստ ծափահարութիւններու: Երեկոյթի յաջողութեան գաղտնիքներէն մին էր նաեւ մեներգչուհի Գարին Պողքուրթի մասնակցութիւնը, որ իր կուռ ձայնով տպաւորեց հանդիսատեսները, յայտագրին մէջ ստանձնելով շատ կարեւոր բաժին մը:

Հարկ է նշել որ վերոյիշեալ համոյթը այս յայտագիրը պիտի կրկնէ նաեւ յառաջիկայ ամառ, Հայաստանի մէջ կայանալիք համահայկական մարզական խաղերու բացման հանդիսութեան:

**Գիրքի Շնորհանդէս Եւ Մակագրութիւն Անսրլեան Գերդաստանի Պատմութեան**


**Հովանաւորութեամբ՝  
Թեմիս Բարեջան Առաջնորդ  
Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի  
Մասնակցութեամբ՝  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան  
Արեւմտեան Թեմի  
«Զուարթնոց» Մշակութային Յանձնախումբի  
«Նոր Վերնատուն» Ընկերային Եւ Մշակութային Միութեան**

**Գիրքը կը ներկայացնէ՝  
Կարիւն Տէր Գեորգեան**

Տեղի կ'ունենայ՝  
**Հինգշաբթի, 20 Ապրիլ 2023  
Երեկոյան ժամը 7:00ին**

Սրբոց Ղեոնդեանց Մայր Տաճարի,  
Արմեն Եւ Կլորիա Համբար սրահէն ներս:  
3325 N Glenoaks Blvd. Burbank, CA 91504

Գիրքէն օրինակ մը պիտի նուիրուի ներկաներուն  
**Հիրաւիութիւն --- Մուտքը ազատ**





### Տարածաշրջանում Իրավիճակը Կայուն Զեռ

Շարունակուած էջ 2-էն

քմ տարածք:

#### 2022 թուական

2021 թ. Նոյեմբերեան բախումներէից մէկ ամիս անց Պրիւսե-լում Եւրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդութեամբ տեղի ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյ-ճանի նախագահ Իլհամ Ալիեւի առաջին հանդիպումը: Դրանից յետոյ այս ձեւաչափը դարձաւ շարունակական, եւ մի քանի անգամ դեկավարները կրկին հանդիպեցին:

Միաժամանակ, շարունակուած էին բանակցութիւնները ՌԴ միջնորդութեամբ:

Տարուայ ընթացքում ՀՀ տարածքում ամենամասշտաբային յարձակումը Ատրպէյճանի կողմից տեղի ունեցաւ Սեպտեմբերի 13-14-ին: Ատրպէյճանի զինուժի յարձակման հետեւանքով հայկական կողմից 224 անձ զոհուեց, հարիւրաւորներ վիրաւորուեցին: Ատրպէյճանն օկուպացրեց Հայաստանի ինքնիշխան տարածքից շուրջ 150 քառակուսի քիլոմէթր:

ՀՀ կառավարութիւնը պաշտօնապէս դիմեց ՀԱՊԿ-ին եւ ռազմավարական դաշնակից Ռուսաստանին՝ տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու համար: ՀԱՊԿ-ը կրկին որեւէ էական աջակցութիւն չցուցաբերեց Հայաստանին: Աւելին՝ Ղազախստանի արտգործնախարար Մուխտար Տլեուբերդի Սեպտեմբերի 14-ին յայտարարեց, որ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ սահմանը սահմանազատուած չէ, ուստի «սահմանի որեւէ խախտման մասին դժուար է խօսել»:

Հոկտեմբերի 7-ին Պրահայում տեղի ունեցաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ատրպէյճանի նախագահ Ալիեւի, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ Եւրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հանդիպումը: Հանդիպման արդիւնքում տրածուած յայտարարութիւնում ասուած էր. «Հայաստանն իր համաձայնութիւնը յայտնեց՝ աջակցելու ԵՄ քաղաքացիական առաքելութեանը Ատրպէյճանի հետ սահմանի երկայնքով: Ատրպէյճանը համաձայնեց համագործակցել նշեալ առաքելութեան հետ այնքանով, որ քանով որ առնչութիւն կ'ունենայ: Առաքելութիւնն իր աշխատանքները կը սկսի Հոկտեմբերին, առաւելագոյնը երկու ամիս ժամկէտով: Առաքելութեան նպատկը կը լինի վստահութեան կառուցումը, եւ իր գեղարվեստի միջոցով, սահմանային լանձնաժողովներին աջակցելը»:

ԵՄ 40 անձինց բաղկացած

քաղաքացիական առաքելութիւնը աւարտեց գործունէութիւնը Դեկտեմբերին: 2023 թ.-ին Եւրամիութիւնը դիտորդական նոր առաքելութիւն ուղարկեց Հայաստան՝ արդէն 2 տարով:

#### Սիջադէպերը Լեռնային Ղարաբաղում

44-օրեայ պատերազմից յետոյ եռակողմ յայտարարութեան հիմքով Լեռնային Ղարաբաղում հաստատուեց ռուսական խաղաղապահ զօրախումբը: Չնայած ռուս խաղաղապահների ներկայութեանը, գրանցուեցին հրադադարի խախտման բազմաթիւ դէպքեր, որոնք ուղեկցուեցին Ատրպէյճանի կողմից տարածքային նուաճումներով եւ երկուստեք մարդկային կորուստներով, մասնաւորապէս ԼՂՀ քաղաքացիական անձանց սպանութիւններով: Այդպէս, 2020 թ. Դեկտեմբերի 11-ին Ատրպէյճանցիները գրաւեցին Հաղարութի շրջանի Հին Թաղեր եւ Խծաբերդ բնակավայրերը:

2022 թ. Մարտին ատրպէյճանցիները գրաւեցին Փառուխ գիւղը եւ հաստատուեցին Քարազլուխի բարձունքում: Արցախի Հանրապետութիւնն ունեցաւ 3 զոհ:

Արցախում հերթական լարուածութիւնը գրանցուեց Օգոստոսի 1-ին, որի հետեւանքով ՊԲ երկու զինծառայող զոհուեց: Պաքուն ռուս խաղաղապահների միջոցով պահանջում էր փոխել ԼՂ-ն ու Հայաստանը կապող երթուղին: Օգոստոսի 25-ին Աղաւնոյ, Բերձոր եւ Սուս բնակավայրերն անցան Ատրպէյճանի վերահսկողութեան տակ: Դէպի Ստեփանակերտ երթուղին փոխուեց:

2022 թ. Դեկտեմբերի 12-ից ի վեր Ատրպէյճանի կառավարութեան հետ փոխկապակցուած, «էկոակտիվիստ» ներկայացող անձինք փակած են պահում Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը, ինչի հետեւանքով Արցախի բնակչութիւնը յայտնուել է շրջափակման մէջ:

Այսպիսով, թէեւ Մարիա Զախարովան պնդում է, որ հայատրպէյճանական հակամարտութեան համատեքստում իրավիճակը ապակայունացել է «այլ խաղաղոյնների» ներգրաւումից յետոյ, սակայն 44-օրեայ պատերազմից յետոյ տեղի ունեցած բախումները՝ տարածքային եւ մարդկային կորուստները թէ՛ Արցախի, թէ՛ Հայաստանի Հանրապետութիւնների տարածքում վկայում են, որ մինչեւ այդ էլ իրավիճակի ապակայունացման բազմաթիւ դէպքեր են եղել: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչը մանիպուլացնում է:

«ՓԱՍՏԵՐՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

### Ապրիլ 24-ը Իբրեւ Խորհրդանիշ

Շարունակուած էջ 13-էն

առնենք: Բայց, իրագեկ ենք, որ Հայոց Յեղասպանութիւնը Աստուծոյ կամքը չէր եւ ոչ ալ Անոր արտօնութեամբ եղաւ: Իրագեկ ենք նաեւ, որ Աստուած ազատ կամք ունենալու առանձնաշնորհումով օժտած է մարդարարածը: Ազատ կամք ունենալ կը նշանակէ ընտրութիւններ ընել բարի կամ չար գործեր կատարելու: Թուրքերը իրենց ազատ կամքով ծրագրեցին եւ ի գործ դրին Հայոց Յեղասպանութիւնը: Մեծ Եղեռնը Աստուծոյ կամքով չեղաւ, այլ Թուրք պետութեան կամքով: Յեղասպանութեան համար զԱստուած մեղադրելը անհեթեթ, անարդար եւ մեղալի մտածելակերպ է:

Երրորդ. Ապրիլ 24-ը խորհրդանիշ է, ոչ միայն հայութեան, այլ նաեւ համայն մարդկութեան դէմ գործուած մեծ ոճիրի մը: Եթէ մարդկութիւնը մեծ ընտանիք մըն է, այդ ընտանիքի ունէ անդամի դէմ գործուած անարդարութիւն, հալածանք եւ ոճիր, այդ ամբողջ ընտանիքի դէմ գործուած պէտք է նկատել: Հայոց Յեղասպանութիւնը ամբողջ մարդկութեան դէմ գործուած քրէական ոճիր մըն է:

Եթէ քաղաքակիրթ աշխարհի դատապարտէր Հայոց Յեղասպանութիւնը երբեք թող չզարմանայ, թէ ինչո՞ւ նորանոր ցեղասպանութիւններ տեղի կ'ունենան աշխարհի ամէն կողմ: Պատմութիւնը ապացոյց է այս ճշմարտութեան: Հայոց Յեղասպանութեան քառորդ դար չանցած գերմաններ կազմակերպեցին Հրեաներու Հրկիզման Յեղասպանութիւնը, այսպէս կոչուած Haulocost-ը: Գերման բռնակալ Ատոլֆ Հիթլեր իրագեկ էր այդ ճշմարտութեան երբ յայտարարեց, «Այսօր ո՞վ կը յիշէ Հայոց Եղեռնը»:

Դժբախտաբար, պատմութիւնը դարձեալ ինքզինք կրկնեց: Հայոց Յեղասպանութեան յաջորդեցին քանի քանի ցեղասպանութիւններ տարբեր վայրերու մէջ, տարբեր ազգութիւններու դէմ, ինչպէս Գամպոտիայի, Վիէթնամի, Ափրիկէի, Եռկոսլաւիայի եւ այլ երկիրներու մէջ:

Պատմութեան դասերը, դժբախտաբար, շուտով կրնան մոռցուիլ, եթէ չ'ըլլան մարդիկ յիշեցնելու անցեալի մէջ գործուած եղեռներն ու ցեղասպանութիւնները: Հայոց Յեղասպանութիւնը կրնայ ծառայել որպէս յուշարար մարդոց անմարդկայնութեան՝ ուրիշ մարդոց հանդէպ եւ ատոր տխուր հետեւանքը ահազանգող տխուր ազդարար մը:

Չորրորդ. Ապրիլ 24-ը խորհրդանիշ է Հայ Դատին եւ հայ ժողովուրդի պահանջատիրութեան: Թուրք կառավարութիւնը եւ իրեն համախոհ պետութիւնները դեռ կը յամառին ճանչնալ, Հայոց Յեղասպանութիւնը: Երկար տարիներ անցած են Մեծ Եղեռնէն բայց մեր արդարագոյն դատը իր լուծումը չէ գտած: Երկար տարիներ ամբողջ հայութիւնը սպասեց մարդկային արդարութեան,

բայց գրագէտ Սուրէն Պարթեւեանի խօսքով, «անվճառ մնաց մեր արիւնյուլայ իրաւունքին հատուցման պարտքը»: Ես կը հաւատամ, որ ոճրագործ դահիճներուն եւ անոնց գործակատարներուն եւ մեղապարտ բոլոր տէրութիւններուն տազնապող խղճմտանքին խաղաղութիւն պիտի չըլլայ եւ ոչ ալ աշխարհ պիտի կարենայ խաղաղութիւն ապահովել մինչեւ ճշմարտութիւնն ու արդարութիւնը չյաղթանակեն: Այդ պատճառով պէտք է նեցուկ կենանք Հայ Դատին եւ ստանձնենք մեր պահանջատէրի իրաւունքը:

Հայ Դատը ամէն ապրող հայու Դատն է: Տարակոյս չկայ որ այդ Դատի ճանապարհին վրայ խոչընդոտներ կան, այդ Դատին շուրջ շատ հաշիւներ կան, բայց ան մեր Դատն է... այս աշխարհի արդարագոյն դատերէն մին... եւ մենք ենք այդ Դատին իրաւատէրը:

Ի՞նչ են մեր պարտականութիւնները Հայ Դատին նկատմամբ.-

1)Նախ, պէտք է իրապէս հաւատանք այդ Դատին.

2)Զայն պէտք է ճանչցնենք նախ՝ մեր նոր սերունդին, որ մեր ֆիզիքական գոյութեան միակ գրաւականն է.

3)Ապա, զայն ճանչցնենք օտարներուն ակադեմական-մասնագիտական չափանիշով: Պէտք է զայն յստակացնենք մեր հայրենի իշխանութեանց մօտ, թէ միշտ արթուն եւ զգաստ մնալու են ո՛չ միայն մեր Դատը աշխարհի խղճմտանքին ներկայացնելու մէջ, հապա ամէն առիթով օրինաւոր պահանջատէր դառնալու մեր արդար իրաւունքներուն: Միանգամայն, մեր հայրենի իշխանութիւնները իրագեկ ըլլան՝ որ մենք սփիւռքահայերս ալ անքակտելիօրէն կապուած ենք Հայ Դատին, որովհետեւ մեր արդար իրաւունքներու պահանջումով, ուրիշ բան չէ որ կը պահանջենք.

4)Պէտք է զայն յստակացնենք մեր հայրենի իշխանութեանց մօտ, թէ միշտ արթուն եւ զգաստ մնալու են ո՛չ միայն մեր Դատը աշխարհի խղճմտանքին ներկայացնելու մէջ, հապա ամէն առիթով օրինաւոր պահանջատէր դառնալու մեր արդար իրաւունքներուն: Միանգամայն, մեր հայրենի իշխանութիւնները իրագեկ ըլլան՝ որ մենք սփիւռքահայերս ալ անքակտելիօրէն կապուած ենք Հայ Դատին, որովհետեւ մեր արդար իրաւունքներու պահանջումով, ուրիշ բան չէ որ կը պահանջենք. եթէ ոչ մեր ապրելու իրաւունքը, քանի մեր նախահայրերն էին որ բրտօրէն աքսորուեցան իրենց հազարամեայ բնաշխարհէն, եւ անդաստական ցրուեցան աշխարհի տարբեր տարածքներուն մէջ: Մենք մեր արդար ժառանգութիւնն է որ կը պահանջենք:


Յոյսով ենք որ ազնիւ առաքելութիւններու կոչումով ապրող հայութիւնը՝ համազրուած եւ համակարգուած աշխատանքով գործի պիտի լծուի Հայ Դատի խիզախ երթը իր յաջող աւարտին հասցնելու:

**Ստացուած Գիրքեր  
Անցըրլեան Գերդաստան  
Anserlian Dynasty  
Հեղինակ Պետրոս Անցըրլեան**

2022-ին Լոս Անճելոսի մէջ լոյս տեսած այս պատկերազարդ հատորին մէջ առկայ է Անսըրլեան գերդաստանի ժամանակագրական հետաքրքրական պատմութիւնը իր այլազան երեւոյթներով: Հայերէն եւ անգլերէն բաժիններով այս հրատարակութեան մէջ առանձին տեղ գրաւած են Անսըրլեանները ծննդավայր Այնթապէն մինչեւ սփիւռքահայ գաղութներ, ներառնելով գրադումներն ու արհեստները:



### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



Հանգուցեալ ՅԱԿՈՒԲ ԽՊՈՅԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Ապրիլ, 2023ին յաւարտ Ս. Պատարագի, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena: Խնդրող՝ Խպոյեան ընտանիք

### ՅԱԲԱԿՏԱԿԱՆ

Հանգուցեալ ՅԱԿՈՒԲ ԽՊՈՅԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նեկտար Գալաթեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$150 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՅԱԲԱԿՏԱԿԱՆ

Հանգուցեալ Տիկ. ԳՈՂԱՐԻԿ ԳԱԼԱՅԺԵԱՆԻ մահուան առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք իր զաւկին՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նեկտար Գալաթեաններուն, ինչպէս նաեւ ընտանեկան պարագաներուն: «Մասիս»

### ՅԱԲԱԿՏԱԿԱՆ

Հանգուցեալ ԺԱՆԷԹ ՇԻՐԻՆԵԱՆԻ մահուան առթիւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար եղբօր՝ ընկ. Սարգիս Շիրինեանին: «Մասիս»

## ԱՄՆ Արեւմտեան Թեմի Առաջնող

Շարունակուած էջ 16-էն

ճաբոնցի վերականգնող մասնագէտներու խումբի աշխատանքը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանի ասեղնագործութիւններու ընդհանուր վերականգնման ծրագիրը իրագործելով: Հանդիպումի ընթացքին պարոն Օկավան յայտարարեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համագործակցութիւնը կ'երկարաձգուի եւս մէկ տարիով:

Նոյն օրը կէսօրին, ճաբոն-Հայաստան բարեկամութեան ասոցիացիայի անդամներու առաջնորդութեամբ, պատուիրակութիւնը այցելեց Դիանա Աբգարի շիրիմին՝ յարգանքի տուրք մատուցելով ճաբոնի մէջ Հայաստանի առաջին դեսպանին եւ աշխարհի առաջին կին դիւանագէտին: Դիանա Աբգարը սնուցող «մայր գործիչ» էր Հայոց ցեղասպանութեան որբերու համար: Պատուիրակութիւնը այցելեց նաեւ հայ հայթուի Յովհաննէս (Իվան) Ղեկնեան Սագոյեանի շիրիմին, որ յայտնի է ճաբոնի մէջ տարածուած քաղցր սեխի ներմուծմամբ:

Երեկոյեան Առաջնորդ Սրբազանը ներկայ գտնուեցաւ ընթրիքին, որ կազմակերպած էր Մասատոչի Ակիմոտոն՝ արտաքին գործերու նախարարի տեղակալը: Մարտի 16-ին Առաջնորդ Սրբազանը մեկնեցաւ Կիոտօ քաղաք, ուր անոր առաջնորդեցին շրջագայութեան

Ձէն պուտոյակի տաճար՝ Ոսկէ տաղաւար եւ Ռոյոնի տաճար՝ ճաբոնի ամենայայտնի ժայռային այգին:

Այս առիթով տեղին է յիշել, որ դեռեւս 2019 թ. Սեպտեմբերի 17-ին Արեւմտեան Թեմի առաջնորդարանին մէջ տեղի ունեցած է հայ-ճաբոնական բարեկամութեան նուիրուած երեկոյ տեղական, շրջանային եւ պետական մակարդակով ընտրեալ պաշտօնատարներու ներկայութեամբ: Հայերու եւ ճաբոնացիներու միջեւ դարեւոր ստեղծուած համագործակցութիւնը դիմակայած է փորձութիւններուն, որոնք մասին խօսուած է «Դիանա Աբգարի՝ մեծ մարդասիրութեան եւ հայ ազգի մօր ժառանգութիւնը» միջոցառման ժամանակ: Անոր յաջորդեցին գանազան միջոցառումներ, մասնաւորապէս հայկական յատուկ խաչքարի տեղադրումը Յովհանն Արք. Տէրտէրեանի կողմէ, ի նշան երախտագիտութեան ճաբոնցիներուն՝ հայերուն համար Դիանա Աբգարի նման նշանաւոր գործիչին մեծարելու եւ հայ եւ ճաբոնական համայնքներու բարեկամութիւնը կարեւորելու համար: «ճաբոնական գեղեցիկ երկիրը յայտնի է որպէս ծագող արեւի երկիր: Հայոց ցեղասպանութիւնը խաւարով լեցուց հայերին, բայց ճաբոնցիները երաշխաւորեցին, որ արեւը նորէն ծագի մեր սրտերուն մէջ», այս առիթով նշած է Յովհանն Արք. Տէրտէրեանը:

## Պատարագ

Շարունակուած էջ 15-էն

նորածնի բարուրը... Օ, Տէր Աստուած, այնպիսի մի ահուելի դատաստան էր երկրի վրայ, որ Դժոխքի դեւերն անգամ նախանցից կը ճաքէին...

Հոգեվարքի վերջին վայրկեաններն ապրող մարդիկ յոյսի մի հայեացքով էին նայում վանականի կողմը եւ մեռնում հաւատալով...

Լուել էին մեռնող մարդկանց վերջին տնքոցները, սակայն վանականը շարունակում էր ծնկած ճօճուլ տեղում, աղօթք էր շնչում թէ գանտագ, երգ էր թէ կորցրած հաւատքի մրմունջ, Օ, ոչ, դա պատարագ էր... հոգեհանգստի պատարագ...

-Դէ բաւ է, ցնդած գեւուր, նայիր, ճանկելով վանականի մորուքը եուզբաշին նրա դէմքը շրջեց դէպի ետ՝ դէպ մորթուած քարաւանը, - ես եմ մեծ, թէ քո Աստուածը: վանականը, աչքերը յառած եղեռական տեսարանին, դանդաղ ձեռքը վեր բարձրացրեց

- Քրիստոս յարեաւ ի մեռելոց... - Շուն կեաւուր- փրփրեց եուզբաշին- կարգայ քո աղօթքը, թոյլ եմ տալիս, տեսնեք թէ ինչպէս է յարուցիւն առնելու սրանցից մէկը, - մատնացոյց անելով թքեց եուզբաշին: Դանդաղ ոտքի կանգնեց վանականը,

Հայր մեր որ յերկինս ես... աչքերը փակ, գլուխը վեր, այն- խառն մագերը անապատի քամուց ծածանուելով նա մի անբացատրելի երկիւղ եւ սարսուռ էր ներշնչել դիակները կողքին սեւ անգղների պէս ցցուած ասկեարներին: Ու երբ հնչեց «ԱՄԷՆ» յանկարծ անապատի գաւեշտական լուծիւնն ընդհատուեց մանկական ուրախ, անուշ դունդուկոցով... Ցնցուած ասկեարները մոտ վեզեցին դիակոյտին եւ նոյնքան էլ արագ ետ ընկրկեցին իրենց տեսածից սարսափած: Կապիւտաչեայ մի չքնաղ մանկին կիսաքանդ բարուրից խաղում էր մահացած մօր նախազգարդ ճակատանոցի հետ:

- Մորթել դրան- լրբացաւ եուզբաշին:

Տեսարանից ցնցուած ասկեարները աւելի ետ նահանջեցին: Բոլորին տիրել էր վախի ու սարսափի մի զգացում...

-Վախկոտ անասուններ, ցնդած վանականից վախեցաք, թէ այդ մի բուռ խմորից, - գոռաց եուզբաշին դուրս քաշելով արիւնոտ եթաղանը:

- Չհամարցակուեց, մոռնա՞ծ վանականը,- չհամարցակուեց եուզբաշին, կ'անիծեմ...

Քրքջաց թուրքը: - Եթէ այս մսակոյտի մէջ է քո Աստուածը, - թափով վեր բարձրացնելով եթաղանը գոռաց նա, - ապա ես կը սպաննեմ քո Աստուած, կեաւու... ու... ու...

Ինչ որ սեւ ան մտրակի պէս խարազանեց եուզբաշու ձեռքը եւ նոյն արագութեամբ էլ ետ թռչեցով անհետացաւ իր ետեւից թողնելով միայն գալարաւուն հետքեր աւազների վրայ...

- Շէյթան... շէյթան... գոռգորալով այս ու այն կողմ փաշան ասկարները թողնելով եուզբաշուն ծնկած աւազներին: Սառը քրտինքը պատել էր դէմքը, ձեռքը ըրպէս առ ըրպէս ուռնում էր, ահռելի ցաւից ջղաձգում էր մարմինը:

- Յանուն Ալլահի փրկիր, մարդ Աստու: Կուչ ու ձիգ անելով աղերսում էր նա: վանականը պատուեց փարաջայի ծուկներին մէկը եւ կապեց եուզբաշու ձեռքը, այն- ձեռքը որով հենց նոր մորթել էր մի ամբողջ աստուածութիւն... Նա գիտէր, որ ուշ էր, եւ որ եուզբաշին դատապարտուած էր, բայց կատարեց իր հայ քրիստոնեաի պարտքը... չէ որ ինքը մարդ էր, անչափ շուայլ էր հոգին չարութեամբ լցուելու համար...:

Գրկելով մանկանը վանականը նրան մօտեցրեց մեռնող թուրքին, - Նայիր եուզբաշին, դու չկարողացար նրան սպաննել... երկու անգամ Քրիստոս չն սպանում...

- Ու... սատկող շնագայլի նման ոռնաց մեռնող եուզբաշին վերջին անգամ նայելով հեռացող վանականին, որը գնում էր տանելով իր ծուլատուած փարաջայի ցոծում ի կապուտաչեայ փոքրիկ Հայաստան...

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**  
 From Armeno-Turkish to Armenian and English languages.  
 Bring your family's history back to life!  
 Family letters, postcards, diaries, and more...  
 Please reach out for quotes  
 Website: norayr.daduryan.com  
 Email: norayrdaduryan@gmail.com

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻ ԷԱՍԱՐ)**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ՇԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



### Արթուր Դալթեան Թուրքիոյ Սէջ Դարձաւ Մարմնամարզութեան Եւրոպայի Ախոյեան



Սպորտային մարմնամարզութեան Եւրոպայի մեծահասակներու առաջնութեան եզրափակիչ փուլին Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի ախոյեան, Հայաստանը ներկայացնող Արթուր Դալթեանը դարձաւ Եւրոպայի ախոյեան հենացատկ վարժութեան մէջ:

Թրքական Անթալիա քաղաքին մէջ ընթացող Եւրոպայի առաջնութեան եզրափակիչին Արթուր Դալթեանը հաւաքեց 14,266 կէտ եւ գրաւեց 3-րդ տեղը: Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականի անդամ Վահագն Դալթեան դարձաւ Եւրոպայի առաջնութեան արծաթէ մետալակիր:

### ԵԱ. Իզապելա Եայլեանը Պարգևատրուեցաւ Երեք Պրոնզէ Մետալներով

Երեւանի Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ կանանց 55 քկ ծանրութեան պարզեւատրման արարողութիւնը: Ծանրամարտի Եւրոպայի առաջնութեան Հայաստանի առաջին մետալը նուաճած Իզապելա Եայլեանը պարզեւատրուեցաւ երկամարտի պրոնզէ եւ պոկոմ ու հրում վարժութիւններու երկու փոքր պրոնզէ մետալներով:



Թոքիոյ Ողիմպիական խաղերու մասնակիցը իր առաջին մետալը նուաճեց մեծահասակներու երկամարտին: Երեւանի մէջ կատարուող Եւրոպայի առաջնութեան Եայլեանը երկամարտի 196 քկ արդիւնքով դարձաւ պրոնզէ մետալակիր:

### «Ոսկէ Գնդակի» Հաւակնորդներու Տասնեակը

Goal.com-ը ներկայացուցած է 2022-2023 թուականներու մրցաշրջանի լաւագոյն ֆուտպոլիստի «Ոսկէ գնդակի» հաւակնորդներու դասակարգման նոր աղիւսակը:

2022թ. աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի եւ Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսին կը պահէ առաջին տեղը: Անոր հիմնական մրցակիցներն են Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթի» 22-ամեայ նորվեկիացի յարձակող էրլինկ Հոլանտը եւ ՊՍԺ-ի 24-ամեայ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն:

- «Ոսկէ Գնդակի» հաւակնորդներու ցանկին վրայ են.
- 1-Լիոնել Մեսի (ՊՍԺ)
- 2-էրլինկ Հոլանտ («Մանչեսթըր Սիթի»)
- 3-Կիլիան Մփապէ (ՊՍԺ)
- 4-Վինիսիուս Ժոնիոր («Ռեալ»)
- 5-Քարիմ Բենզեմա («Ռեալ»)
- 6-Վիկտոր Օսիմէն («Նափոլի»)
- 7-Խվիչա Կվարացիսեյիա («Նափոլի»)
- 8-Քեւին Ըջ Պրոնյէ («Մանչեսթըր Սիթի»)
- 9-Մարքուս Ռեշֆորտ («Մանչեսթըր Եունայթեդ»)
- 10-Ռոպերտ Լեւանդովսկի («Պարսելոնա»)

### «Պարսելոնայի» Նախագահը Հաստատած Է, Որ Մեսին Կը Վերադառնայ

«Պարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան երկրպագուներու հետ գրոցի ժամանակ հաստատած է, որ աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսին Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-էն կը վերադառնայ գաթալոնական ակումբ, կը հաղորդէ Cadena SER-ը: Մեսիի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ կ'աւարտի Յունիսին: Ան 2021-ի ամբան «Պարսելոնայէն» տեղափոխուած էր փարիզեան ակումբ ազատ գործակալի կարգավիճակով:

Ընթացիկ մրցաշրջանին Մեսին ՊՍԺ-ի հետ մասնակցած է 34 հանդիպումներու, նշանակած է 19 կոլ, կատարած 18 կոլային փոխանցում

### Գոռ Սահակեանը Դարձաւ Ծանրամարտի Եւրոպայի Ախոյեանը



Ծանրամարտի Եւրոպայի ախոյեանութեան տղամարդոց 67 քկ քաշային կարգին մէջ Գոռ Սահակեանը նուաճած է Եւրոպայի ախոյեանի կոչումը:

Սահակեանը երկամարտի 320 քկ արդիւնքով նուաճած է ոսկէ մետալ: Գոռ Սահակեանի նուաճած երեք ոսկեայ մետալները առաջինն էին տղամարդոց հաւաքականին մէջ: Տղամարդոց 67 քիլոկրամ քաշային կարգի պոկոմ վարժութեան մէջ մարզիկը յաջողութեամբ բարձրացուց 140 քիլոկրամ, աչուհետեւ 145 քիլոկրամ եւ դարձաւ փոքր ոսկեայ մետալակիր: Հրում վարժութիւնեան՝ Գոռ Սահակեանը յաջորդաբար բարձրացուց 170 քիլոկրամ եւ 175 քիլոկրամ: Ու այս վարժութեան մէջ եւս ոսկի նուաճեց:

### «Արսենալ» Չյաղթեց Լոնտոնեան Տերսիի Ընթացքին

Անգլիոյ առաջնութեան 31-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» հիւրընկալեց «Ուեստ Հեմին»: Լոնտոնեան այս երկու խումբերու տերպին աւարտեցաւ հաւասար՝ 2:2 արդիւնքով:

31 խաղէն յետոյ «Արսենալ» 74 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն», որ մէկ խաղ նուազ կատարած է:

### «Մանչեսթըր Եունայթեդ» Յաղթեց Եւ Բարձրացաւ Երրորդ Տեղ

Անգլիոյ առաջնութեան 31-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթեդ» հիւրընկալեց «Նոթինկհեմ Ֆորեսթին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

30 խաղէն յետոյ «Մանչեսթըր Եունայթեդ» 59 կէտով բարձրացաւ երրորդ տեղ եւ 3 կէտ առաջ է չորրորդ տեղը նահանջած «Նիւքասլ Եունայթեդէն», որ այս հանգրուանին 0:3 արդիւնքով պարտուած էր «Ասթոն Վիլայէն»:

### Սփապէի Եւ Մեսիի Կոլերը Նպաստեցին ՊՍԺ-ի Յաղթանակին

Ֆրանսայի առաջնութեան 31-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար ՊՍԺ-ն ընդունեց երկրորդ տեղը ընթացող «Լանսին»:

Ֆրանսացի Քրիստոֆ Գալտիէի գլխաւորած խումբը յաղթեց 3:1 արդիւնքով: Փարիզեան խումբի կոլերը նշանակեցին ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն, փորթուկալացի կիսապաշտպան Վիտինեան եւ արժենթինցի յարձակող Լիոնել Մեսին:

ՊՍԺ-ն 72 կէտով առաջինն է, «Լանսը» ետ է 9 կէտ եւ երկրորդն է:

### «Պարսելոնայի» Հաւասար Արդիւնքը

Սպանիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին առաջատար «Պարսելոնան» հիւրընկալեց «Խետաֆէին» եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 0:0:

«Պարսելոնան» 73 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 10 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ռեալէն»:

### «Ռեալ» Ուժեղ Էր «Քատիսէն»

Սպանիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին ախոյեան Մատրիտի «Ռեալը» հիւրընկալեց «Քատիսին» եւ յաղթանակ նուաճեց 2:0 արդիւնքով:

«Ռեալը» 62 կէտով երկրորդն է եւ 10 կէտ ետ է առաջատար «Պարսելոնայէն»:

### «Ինքեր» Պարտուեցաւ «Մոնցայի» Դէմ

Իտալիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» Միլանի մէջ ընդունեց «Մոնցային» եւ պարտութիւն կրեց նուազագոյն արդիւնքով:

Հենրիխ Միլիթարեան «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր, սակայն ղեղին քարտ ստացաւ 66-րդ վայրկեանին եւ դուրս եկաւ խաղէն: «Ինթեր» 51 կէտով 5-րդն է, «Մոնցան» 12-րդն է՝ 38 կէտ: